Հարիսի

1987

Ի

Ամ 146

ԽԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուլիս

1987



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԵՐԱՆԵԼԻ ՕՐԵՐ

1. Այս օրերին, երբ արտասահմանի որոշ կուսակցական թերթեր իրենց գլուխն ունենալով Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթը, կազմակերպված հարձակում են սանձազերծել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի դեմ, իբր թե ի պաշտպանություն Տաճն Կիլիկիո Աթոռի, մեր մտածումը գընում է դեպի մոտավոր անցյալը, մանավանդ հետ առաջին համաշխարհային պատերազմի շրջանը, երբ քայլ առ քայլ զարգանում էր իրավ եղբայրական համերաշխ գործակցություն Ս. Էջմիածնի և Տաճն Կիլիկիո Աթոռների միջև:

2. Ճշմարիտ է, թե հեռավոր անցյալում, երբեմն խանգարվել է այդ համերաշխությունը, և տագնապալի կացություններ են ստեղծվել ինչ-ինչ արտաքին պայմանների բերումով կամ երկու կողմերի որոշ հոգևորականների անխորհուրդ ու հախուռն գործավորումների հետևանքով, սակայն այդ շրջանները կարճատև են եղել ու բնականոն հարաբերությունները վերականգնվել են, կանոնական իրավասությանց սահմանների պահպանումով և ճանաչումով Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի վերին հեղինակության, իբրև Ընդհանրական Հայրապետը համայն Հայ Առաքելական Եկեղեցու:

3. Իբրև համերաշխության պատմական օրինակներ, հիշենք միայն երեք իրողություններ:

17-րդ դարում էր, երբ Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբերությունները վատթարացել էին, ու կատարվում էին կանոնական անկարգություններ և իրավասությանց սահմանների խախտումներ, այլ խոսքով՝ անտեսվում էին Հայ Եկեղեցու կանոնական միությունը երաշխավորող սկզբունքները: Բայց օրվա հայրապետները գիտակցելով վտանգը, 1656-ին հանդիպում են ունենում Երուսաղեմում, Հայոց Պատրիարքության հարկի տակ, ողջագուրվում են իբրև եղբայրներ, վերականգնվում են օրինական կարգն ու կանոնը իրենց Աթոռների հարաբերությանց և իրավասությանց մեջ, և այսպիսով վերսկսվում է համերաշխ մի գոյավիճակ և գործակցություն նրանց միջև:

4. Իբրև հիշատակության արժանի համերաշխության պահ, նշենք նաև այստեղ Մեծ Եղեռնի ահավոր ողբերգությունից հետո ստեղծված ծանր կացությունը, երբ Կիլիկյան Աթոռը, հուսահատության անդունդին մոտեցած, իր թշվառ զավակների հետ միասին գտնվում էր անտեր ու անտուն վիճակում: Այդ օրերին նույնիսկ եղել են մտածողներ, որ այլևս վերջ պետք է տալ Կիլիկյան Աթոռի գոյությանը, այն փոխադրելով Երուսաղեմ ու միացնելով տեղի Հայոց Պատրիարքության Աթոռին: Սակայն այդ հուսահատական պահը շուտով հաղթահարվել էր, և Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Ե Հայրապետի հրամանով ու Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի կարգադրությամբ, հատուկ համաձայնագիր էր կնքվել 1929-ին, որով Երուսաղեմի Հայոց Աթոռի իրավասության ներքև գտնվող՝ Լի-

բանանի և Դամասկոսի թեմերը փոխանցվել են Կիլիկյան Աթոռի իրավասության ներքև, որպեսզի այդպիսով տեղահան եղած Կիլիկյան Աթոռը, Կիպրոսի և Հալեպի իր թեմերի հետ միասին, գոյատևի ու պահպանի իր պատմական Աթոռի առաքելությունը Հայ Եկեղեցու կառույցում:

Ահա մի պատմական սքանչելի օրինակ հոգեշեն համերաշխության և հայաշունչ եղբայրության:

5. Համերաշխության երրորդ պահ ենք նկատում Ս. Էջմիածնի գահակալ, երջանկահիշատակ Տ. Տ. Խորեն Ա Մուրադբեկյանի մահվան տխուր օրերը, երբ Կիլիկյան Աթոռը իր ողջ միաբանությամբ, ի գլուխ ունենալով իր ծերունազարդ Տ. Տ. Սահակ կաթողիկոս Խապայանին, սրտառուչ կերպով մասնակցել է Հայ Եկեղեցու մեծ սգին, որով մի անգամ ևս արտահայտվել է սիրալիր եղբայրությունը Ս. Էջմիածնի ու Տանն Կիլիկիո Աթոռների միջև:

Ահա մի հատված Կիլիկյան Աթոռի «Հասկ» պաշտոնաթերթի խմբագրականից.

«Ծանթահարիչ էր Ապրիլ 11 թվակիր Երուսաղեմի Ամենապատիվ Ս. Պատրիարքին հեռագիրը, որով կգուժեր **Ընդհանրական Հայրապետի** Տ. Տ. Խորեն Ա Ս. կաթողիկոսի դառնաղետ մահը՝ սրտի կաթվածի հետևանքով:

Խիստ վշտալի և հուզիչ էր այն վայրկյանը, երբ Նորին Ս. Օծություն Տ. Սահակ կաթողիկոս լսեց **Ընդհանրական Հայրապետին** մահվան բոթը. քանի մը վայրկյան լուռ մնաց ան, գլուխը կախ և աչքերը փակ և ի վերջո, կարծես հարվածին պատճառած թմրութենեն ուշաբերելով, ըսավ.—«Ես պատրաստ էի փոխան Անոր մեռնելու, Եկեղեցին Անոր պետք ուներ, տակավին երիտասարդ էր բաղտադմամբ իմ տարիքիս, հայ ժողովուրդը շատ բան կսպասեր Անոր բազմապիսի կարողություններեն. յուր հանկարծակի մեկնումով խոր խոցեց արդեն խոցոտյալ սիրտս. երեսունվեց տարվան կաթողիկոսությանս ընթացքին ողբացի ինձ լծակից պատվական Հայրապետներն, Խրիմյան, Իզմիրլյան, Սուրենյան, Կյուլեսերյան և ահա ի լրումն դժբախտությանց Մուրադբեկյան... Թող Աստված լուսավորե հոգին և Մայր Աթոռը միշտ հաստատ պահե»:

Եվ ապա «Հասկ» պաշտոնաթերթի խմբագիրը շարունակում է.

«Տասնվեց դարերե ի վեր հայության աչքը միշտ հառած է Ս. Էջմիածնի և երբեք չէ խաբված, Հայ Եկեղեցին եղած է միակ հաստատուն և տևական միջնաբերդը՝ հայության գոյությունը պահպանող, Հայ Եկեղեցին հայության հետ տառապած է, հայության հետ տեղափոխված է, տարագրված է, և սակայն միշտ Ս. Էջմիածինը իր հմայքը պահած է և հայությունը երբեք չէ մոռցած զայն, և ամեն տեսակ զոհողությանց ենթարկված է՝ Էջմիածինը և անոր կենսատու հիշատակը վառ պահելու համար: Էջմիածինը զանազան ժամանակներու մեջ թշնամիներե պաշարված ու ավերված է, Հայրապետական գահը ժողովուրդին հետ տեղե տեղ փոխադրված է, Հայրապետներ հալածված, չարչարված և գերի ալ տարվողներ եղած են, սակայն Էջմիածինը միշտ հայ ժողովուրդի մտքին ու սրտին մեջ այնպիսի հաստատուն տեղ մը գրաված է, որ բոլոր փոթորիկներե, վերիվայրումներե հետո Ան իր գոյությունը պահած է շնորհիվ եկեղեցասեր և ավանդապահ հայ ժողովուրդի աննկուն կամքի ուժին:

Կիլիկիո տարագիր Կաթողիկոսությունը, իր ալեզարդ գահակալով և նորակազմ միաբանությունով, թեմական սրբազաններով և տարագիր թեմականներով, կմաղթե, որ Հայ Եկեղեցվո վրայեն շուտ վերնա սուգի և տխրության քողը, Մայր Աթոռը օժտվի արժանավոր գահակալով մը և Լուսավորչի կանթեղը իր անուշ պլպլումներով մխիթարե վշտահար ու սգավոր հայ ժողովուրդը» («Հասկ», 1938, մայիս):

Չի կարելի սույն տողերը կարդալ առանց հոգեշարժ հուզում ապրելու:

Ահավասիկ իսկական պատկերը Կիլիկյան Աթոռի հարազատ հոգու:

6. Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի եկեղեցական միության և եղբայրական համերաշխ գործակցության այդ ոգին, մնաց Անթիլիասի պահապան հրեշտակը նաև լուսաբնակ Տ. Տ. Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսի գահակալության տարիներին: Եկեղեցական միության ոգու և համազգային միասնության անմոռանալի պահեր եղան Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ-ի ընտրությունն ու օծումը, որին անձամբ մասնակցեց և նախագահեց Տանն Կիլիկիո մեծ Հայրապետը:

7. Ավաղ, սակայն, միության և համերաշխության այդ ոգին, 1956-ից հետո զոհ գնաց՝ Եկեղեցու հետ կապ չունեցող միջկուսակցական հակամարտ փոթորիկներին՝ բոլորիս ծանոթ հետևանքներով:

Այստեղ մեր նպատակը չէ դատումներ

անել այդ տխուր օրերի իրադարձությունների և դրանց հետևանքների մասին: Միայն կամենում ենք մեր հաստատ համոզումը արձանագրել, որ արտասահմանում, մեր Եկեղեցու ծոցում պետք է վերջ գտնեն գոյատևող տագնապալի կացությունները, ամեն գնով, որովհետև այլապես հետզհետե պիտի վտանգվի մեր Մայր Եկեղեցու կրոնական և ազգային պատմական առաքելությունը հայ Սփյուռքի տարածքի վրա: Ամեն ճշմարիտ հայ հարց պետք է տա իրեն, մեր օրերին ո՞վ, ի՞նչ շահ ունի Հայրենիք-Սփյուռք կամուրջը քանդելու կամ տկարացնելու եկեղեցական մակարդակի վրա: Ի՞նչ են մտածում արդյոք Անթիլիասի մեր եղբայրները:

Մենք ողջունելի ենք գտնում Մայր Աթոռիս և Կիլիկյան Աթոռի գահակալների ճիգերը այս ուղղությամբ և ուզում ենք հույս հայտնել, որ հակառակ որոշ թերթերի դիտումնավոր և չարամիտ աղմկարարության, Տերը օգնության պիտի հասնի իր իսկ հիմնած Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:

Եվ մեզ, այսօրվաններիս, թող պայծառ օրինակ հանդիսանան մոտավոր անցյալի եղբայրության և համերաշխության երանելի օրերը, Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների միջև:



ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Քրիստոնեական Եկեղեցիների հին ավանդության համաձայն միմյանց պետք է հայտնել Եկեղեցիների ներքին կյանքի կարևոր իրադարձությունների մասին: Պատիվն ունեմ Ձերդ Սրբությանը հայտնելու, որ Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Եկեղեցական Ժողովը 1987 թվականի հունիսի 11-ին մեր Եկեղեցու Արքեպիսկոպոս է ընտրել Կունո Պայուլային: Այս առթիվ թույլ տվեք հույս հայտնել, որ մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները հետ այսու ևս կշարունակվեն երկկողմանի անկեղծ սիրով: Մեր ուղերձի ավարտին մաղթում ենք Ձերդ Սրբությանը քաջառողջություն և երկար տարիների օրհնյալ հաջողություններ Ձեր բարձր և սրբազան ծառայության մեջ:

Խորին հարգանքներով՝

Է. ԽԻՅՋՅԱՐՎ

ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԱՏԵՆԱՊԵՏ

Տալլին,
29 հունիսի 1987 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱՅԻՆ, ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Տալլին

Ձերդ Սրբազնություն,

Գոհունակությամբ տեղեկացանք Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու Հովվապետական Աթոռի վրա Ձեր ընտրության մասին:

Ի ներքո Սուրբ Էջմիածնի կամարների հիլում ենք Մեր ողջույնները և

անկեղծ ցանկությունները և մաղթում քաջառողջություն և երկար տարիների կյանք, հաջող իրականացում Ձեր աստվածահաճո ծրագրերի՝ ուղղված ձեր Սուրբ Եկեղեցու հետագա ծաղկման:

Թող օրհնի Հովվապետ Տերը Ձեր հետագա ծառայությունը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
29 հունիսի 1987 թ.



«ԵՍ Է՛Լ ԵԿԵԼ ԵՄ ԻԲՐԵՎ ՈՒԽՏԱՎՈՐ»

Պատմական անհիշելի ժամանակներից ուխտագնացությունը մեր ժողովրդի համար հոգու սրբազան պահանջ է եղել: Քրիստոնեական երկու հազար տարիների ընթացքում մեր պատմիչները մեկից ավելի անգամներ ճշմարտապատում տեղեկություններ են թողել ուխտագնացությունների մասին Մշո Ս. Կարապետ, Առաքելոց վանք, Ս. Թադեի, Վասպուրականի զանազան սրբատեղիներ ու վանքեր: Հավաքական ուխտագնացություններ կազմակերպվել են դեպի Ս. Էջմիածին, Հաղբատ, Սանահին, Տաթև և մանավանդ Ս. Գեղարդա պատմական վանք: Այս վանքում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչից սկսած ոչ միայն հավատացյալ հայ ժողովուրդը, այլև շատ հաճախ սրբազան մեր հայրապետները, իրենց հետևորդներով, որպես ուխտավոր եկել են երկրպագելու քրիստոնեական մեծագույն սրբությունն հանդիսացող Աստվածամուխ Ս. Գեղարդին: Մեր օրերում էլ Ս. Գեղարդի պատմական այս նշանավոր վանքը չի կորցրել իր նախկին փառքը որպես ուխտավայր: Անցյալի սրբազան սովորույթով ամեն շաբաթ և կիրակի բազմահազար հայորդիներ Հայաստանի զանազան շրջաններից, գրեթե առանց բացառության Մայր Հայրենիք ուխտի եկած հարյուրավոր սփյուռքահայեր, ինչպես նաև մեր երկրին մոտիկ ու հեռավոր հանրապետություններից մեծ թվով ուխտավորներ ամեն կիրակի ու տոն օրերին գալիս են ու գալիս աղոթքի ու երկրպագության համար, ուր ուխտավորի, այցելուի առջև իրենց ամբողջ շքեղությամբ հառնում են անկրկնելիորեն գեղեցիկ հայրենի բնաշխարհի հազարամյա սրբացած այն քարերը, որոնք մոմի, խնկի և ժամանակի միահյուսումով դարձել են հուշ սրբազան պատմության ու հերոսական անցյալ:

1987 թ. հունիսի 28, կիրակի:

Ազգիս Սրբազնագույն Հայրապետը որոշել էր ուխտի աղոթքի գալ մեր հնամյա վանքը: Այդ օրը Ս. Էջմիածնի Մայրավանքը սովորականից ավելի շուտ էր արթնացել՝ սրբազան մեծ ուխտավորին ճանապարհելու համար: Առավոտյան Նորին Սրբությունը իր ուղեկիցներով Իջման ս. սեղանի առջև աղոթքից հետո ճամփա ելավ ուխտի: Մայրավանքից ճանապարհը դեպի Ս. Գեղարդա վանք անցնում է Արարատյան դաշտավայրով, մայրաքաղաքի լայնահուն պողոտաներով, Կոտայքի շրջանով և երբեմնի արքայական ամառանոցային քաղաք Գառնիով: Այս ամբողջ ճանապարհին Հայոց Հայրապետին ուղեկցում էին Աստվածաշնչյան սրբազան Արարատները: Քիչ հետո մեքենաների շարասյունը հայտնվեց գեղատեսիլ ու անտառաշատ Ազատ գետի հովտում, որի ակունքների մոտ, գետի ձախ ափին, մեր նախնիները կառուցել են հրաշակերտ այս տաճարը, որտեղ երբեմն օտարներն անգամ գալիս են այցելության: Վանքիս միաբանությունը, հավատացյալ հոծ բազմության հետ միասին, գլխավորությամբ վանահոր՝ արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի, դիմավորեց Նորին Սրբությանը: Աջահամբույրից հետո Վեհափառ Հայրապետը իր հայրական օրհնությունը բաշխեց հավաքվածներին և զանգերի քաղցրալուր ղողանջի ներքո առաջնորդվեց սուրբ տաճար:

Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի

միաբաններից հյուրաբար Ս. Գեղարդում գտնվող Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը: Նորին Սրբությունը և Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամները՝ գերաշնորհ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի գլխավորությամբ, զբաղեցրին իրենց հատկացված տեղերը: Այսօր իրապես բացառիկ է ս. պատարագի արարողությունը. երգչախումբը երգում է «Սուրբ-Սուրբ»: Աղոթում է լեփ-լեցուն եկեղեցին, աղոթում է նաև Սրբազան Քահանայապետը:

Հովվապետիդ քաջառողջության, եկեղեցաշեն գործոց հաջողության համար:

Վեհափառ Տեր, Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրված սրբազան այս վանքի ներկա միաբանության և հազարավոր ուխտավոր հայության համար բացառիկ ու եզակի օր է այսօր: Ստույգ է, որ Հայոց Հայրապետներից շատերը հաճախ երկրպագելու են եկել համաքրիստոնեական Աստվածամուխ Ս. Գեղարդին, որը շուրջ չորս հարյուր հիսուն տարի այնքան

Թափոր՝ դեպի Ս. Գեղարդի տաճար

«Հայր մեր»-ից առաջ վանքիս վանահայր արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը, բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին և իր ուղեկիցներին, ասաց.

«Շնորհազարդ և Սրբազան Հայրապետ Ամենայն Հայոց.

Որդիական անհուն հրճվանքով և երախտագիտությամբ, հանուն մեր միաբանության, բազմահազար հավատացյալ և ուխտավոր Ձեր հոգևոր զավակների, թույլ տվեք ողջունել և բարի գալուստ մաղթել Ձերդ Սրբությանը՝ Ս. Լուսավորչի գահի 130-րդ Աստվածարյալ Հայրապետիդ, և մատուցել մեր որդիական արտաբուխ բարեմաղթությունները՝ իմաստնազարդ և քաջ

հավատքով և երկյուղածորեն պահպանվել է հոչակավոր այս վանքի միաբանության կողմից: Ճշմարիտ է նաև, որ վերջին հարյուրամյակում թերևս առաջին Հայրապետն եք, որ հատուկ մի կիրակի բացակայում եք Մայրավանքից հոչակավոր, պատմական այս վանքում աղոթելու, Ձեր սրբազան ներկայությամբ, օրհնաբեր խոսքով ավելացնելու համար նաև մեր հոգիների կանթեղի յուղը՝ ավիշը ոչ միայն մեր հոգևոր կյանքի, այլև լուսատուն նվիրումի այն ուղու, որին կոչված ենք ծառայելու: Հպարտ եմ հանդիսավոր այս պահին զեկուցել ալեզարդ Վեհիդ, որ տասը տարի առաջ Ձերդ Սրբության օրհնությամբ և գործուն միջամտությամբ վերակազմակերպված այս վանքի այսօրվա միաբաններս քաջապես

Վեհարանում հարգանքի տուրք է մատուցվում Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի մարմնին

գիտակցում ենք, որ ծառաներն ենք անզուգական, առաքելական ու ճշմարտապես ազգային մեր Սուրբ Եկեղեցու, որի մյուռոնաբույր կամարների ներքո, զորությամբ Ս. Հոգու և արիաջան, եկեղեցասեր, հայրենասեր հայ եկեղեցականների անմնացորդ նվիրումի, հայ ժողովուրդը անաղարտ է պահել ոչ միայն իր ուղղափառ հավատքը, այլև իր ազգային ու մշակութային անկրկնելի դիմագիծը: Ե դարի հայ պատմագրության ամենանշանավոր դեմքերից Փավստոս Բուզանդը, բնութագրելով Ներսես Մեծ Հայրապետին, որը ի միջի այլոց իր ամառային արձակուրդը երբեմն այս վանքում է անցկացրել, գրում է. «Այր էր սա մեծ և բարձր հասակաւ, վայելուչ գեղով... տեսչալի, ցանկալի, երկիւղած ի տեառնէ, յոյժ աւանդապահ պատուիրանացն նորա, մարդասէր, սուրբ, զգաստ, սաստիկ իմաստուն... իրաւանցն իրաւարար, ցածուն, քաղցր, խոնարհ և կատարեալ սիրովն Աստուծոյ և եռայր Հոգւովն սրբով: Ամենայնիւ կատարեալ յամենայնի, զի ոչ երբեք ուրեք եղև նման նմա այլ ոք ի Հայաստան երկրի»:

Աստված իմ, որքան զուգադիպություն և նմանություն Մեծն Ներսես և Մեծն Վազգեն Հայրապետների միջև: Թվում է, թե ճշմարտապատում և իրատես պատմիչը նկատի ունի Մեծն Վազգեն Ա Ծնորհազարդ Հայրապետին: 30 և ավելի տարիներ է, որ վերաշինում և բարեզարդում եք Աստուծո փառքի համար կառուցված անկրկնելի ճարտարապետական գոհարներ՝ մեր վանքերն ու եկեղեցիները, ինչպես այդ անում էր 1500 տարիներ առաջ Մեծն Ներսես Հայրապետը: Մեր ժողովուրդն ու Եկեղեցին Ձերդ Սրբության անձնական բարձր հեղինակությանը և Ձեզ յուրահատուկ գործարար ջանքերին են պարտական, որ վերջապես մեր օրերում հնարավոր եղավ հաչս օտարների մեր Եկեղեցին, մանավանդ Քրիստոսաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր ավանդական դիրքի և բարգրության հասցնել: Հպարտ է մեր ժողովուրդը, որ ջարդվեց օտարների կողմից մեր Եկեղեցու նկատմամբ եղած արհամարհանքի և անտարբերության սառույցը: Այսօր, արդեն Հայ Եկեղեցին ամենաբազմանդամ մեծերի հետ խոսքի է նստում որպես իրավահավասար Եկեղեցի, պահելով երկնազարամյա առաքելական իր շքեղ փառքն ու ավանդական դիրքը: Այս շատ կարևոր հարցում դժվար է զուգահեռ անցկացնել մեր եկեղեցական պատմության մեջ:

Վեհափառ Տեր, օգտվելով հարմար առիթից, թույլ տվեք մեր միաբանության և իմ կողմից խոնարհ աջահամբույրով վերանորոգել անմնացորդ նվիրվածության և ծառայության մեր ուխտը բազմաչարչար մեր Եկեղեցու, Միածնաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա շնորհազարդ մեծ գահակալի հանդեպ: Որդիական շնորհակալություններ Սրբությանդ Ձեր սրբազան ներկայությամբ մեզ բոլորիս պարգևած շատ բարձր պատվի համար: Այսօր և ամեն օր, Վեհափառ Տեր, ուխտավոր մեր ժողովրդի հետ, միշտ աղոթող ենք, որ բարին Աստված համերամ ժամանակոք առողջ և ապահով կյանք պարգևի Վեհիդ, որ կարողանաք այսքան խոովահույզ մեր ժամանակներում ալեկոծումներից փրկել մեր Ս. Եկեղեցին:

Կրկին ու կրկին բարի գալուստ մաղթելով Ձեզ և Ձեզ ուղեկցող Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվարժան անդամներին, խոնարհաբար խնդրում եմ օրհնել Ձեր առջև անհամբեր սպասող, Ձեր օրհնությանը կարոտ Ձեր ժողովրդին:

«Ի Տեառնէ առաքեցաք» մեզ համար, Վեհափառ Տեր»:

Հուսկ ապա Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքն ուղղեց հավաքված ուխտավոր ժողովրդին.

Մեզ համար մեծ գոհունակություն է այսօր լինել Ս. Գեղարդում՝ այս պատմական վանքում, ս. պատարագի ժամին, ձեզ հետ միասին աղոթելու: Բացառիկ, իրապես հոգեկան հրճվանքի պահ է ինձ համար, կարծում եմ նաև ձեզ համար, որ այսքան մեծ թվով քավաքվել եք այստեղ: Ինձ համար մխիթարական է, որ մեր ժողովուրդը ոչ միայն Երևանից, այլ նաև հեռավոր շրջաններից, տակավին նույնիսկ դրացի հանրապետություններից հայ կանայք և տղամարդիկ, երիտասարդներ և ծերունիներ չեն մոռանում Ս. Գեղարդը, և գոնե տարին մի անգամ, կամ գուցե երկու տարին մի անգամ ուխտի են գալիս՝ աղոթելու և ստանալու այս սրբացած քարերից և ս. սեղանից Աստուծո օրհնությունը: Ես էլ այսօր եկել եմ իբրև ուխտավոր մեր հոգևոր եղբայր գերաշնորհ Սիոն արքեպիսկոպոսի և մեր Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ միասին: Ճիշտ է, որ կարելի է աղոթել ամեն տեղ, ամեն եկեղեցու կամարների ներքո, կամ նույնիսկ եկեղեցուց դուրս, ինչպես ինքը՝ Հիսուս

արտահայտվում է այդ մասին, թե որտեղ էլ որ լինեք և աղոթեք՝ ես այնտեղ եմ ձեզ լսելու: Դա ճշմարիտ է, սակայն կան վայրեր, սրբատեղիներ, որոնք կարծեք սովորական աղոթատեղիներից ավելի են: Մենք ահա այս Ս. Գեղարդա կամարների ներքո այդ ավելին զգում ենք և ապրում: Եվ այդ ավելին, իմ կարծիքով, այն բազմաթիվ, տասնյակ սերունդներն են, մոտ հազար տարի և ավելի, որոնք մեզ նման ուխտի են եկել: Հայաստանցիներ, նույնիսկ Հայաստանից հեռու ապրող հայեր հարյուրավոր տարիներ շարունակ, սերնդից-սերունդ, շարան առ շարան եկել են համբուրելու այս սրբացած քարերը և հայցելու Աստծու օգնականությունը, ողորմությունը և օրհնությունը: Տակավին հնագույն ավանդություններից մեզ հայտնի է, որ նույնիսկ Գրիգոր Լուսավորիչ եկել է բնության այս հրաշալի անկյունը, այս երկնամերձ լեռների, ժայռերի մեջ աղոթելու: Եվ այսօր, երբ մենք այստեղ աղոթում ենք, անեղեռույթ կերպով զգում ենք մեր նախնիների ներկայությունը մեր մեջ:

Փառք Աստուծո, որ հնադարյան այս վանքը, իմ գահակալության տարիներին վերանորոգվեց հիմնովին: Ավելի տարիքոտները ձեզանից հիշում են, թե ինչպիսի վիճակի մեջ էր գտնվում այն և ինչպիսի անխնամ ու կիսավեր վիճակի մեջ էին գտնվում այս շինությունները 30—40 տարիներ առաջ: Բայց, Աստուծո օգնականությամբ, մեր ժողովուրդի առատաձեռնությամբ, մեր պետական իշխանության բարյացակամ վերաբերմունքով և օժանդակությամբ նույնիսկ, կարողացանք կամաց-կամաց վերանորոգել այս վանքը և՛ ներքուստ, և՛ արտաքուստ, և՛ վանատունը, և՛ բոլոր մյուս հարակից շենքերը: Հատկապես վերջին տասը տարիների ընթացքում Գեղարդա վանքը ամեն իմաստով իր բարձրագույն մակարդակը գտավ և դա պարտական ենք մեծ մասամբ վանահորը՝ Տեր Եղիշե ավ. քհն. Սարգսյանին և իր շուրջը հավաքված քահանա հայրերին և պաշտոնյաներին, որոնք բացառիկ բարեխղճությամբ, գուրգուրանքով և նվիրվածությամբ աշխատում են այստեղ: Աշխատում են այն գիտակցությամբ, որ իրոք ծառայում են Աստուծո և մեր հայ ժողովուրդին: Եվ այս տարիների ընթացքում բոլոր մեր ուխտավորները, որոնք այցելում են Ս. Գեղարդ, և ոչ միայն հայերը, այլ նաև Սովետական Միության հեռավոր շրջաններից եկած մեր ռուս եղբայրները կամ ուրիշ ազգություններ, կամ արտասահմանից, հեռավոր արևմտյան երկրներից եկած ուխտավորներ, իբրև տուրիստներ ոգեշնչվում են այս սրբատեղիով և այս ճարտարապետական հիանալի կառույցով: Պետք է գիտենանք, չմոռանանք, որ Հայաստանի մյուս մի շարք պատմական վանքերի և եկեղեցիների շարքում առաջնահերթ տեղ է գրավում Ս. Գեղարդը իր համբավով: Ս. Գեղարդի վանքը համաշխարհային արժեք ունի իբրև ինքնուրույն, չկրկնվող, ուրիշ տեղ չտեսնված հրաշակերտ տաճար: Ահա այստեղ ենք գտնվում մենք այսօր աղոթելու և ձեզ հետ միասին հոգեկան ներշնչանքի պահեր ապրելու:

Իմ խոսքում ես մի քանի անգամներ հիշեցի աղոթքի մասին: Մեր եկեղեցական գրքերում շատ սքանչելի աղոթքներ կան, որոնք խմբագրել են մեր երանելի հայրապետները, եռամեծ վարդապետները, դրանց թիվը շատ մեծ է, մի ամբողջ գրադարան կարելի է լցնել Հայ Եկեղեցու այդ սքանչելի, հոգևոր և գրական արժեք ներկայացնող աղոթքներով: Բայց կա մի աղոթք, որ մեր սրտին մոտ է առավելապես: Համաքրիստոնեական աղոթք է, որ ինքը մեր Տեր Հիսուս Քրիստոս իր կենդանի շուրթերով արտասանեց առաջին անգամ երկու հազար տարիներ առաջ Իր շուրջ համախմբված Իր հետևորդներին: Դա կարճ աղոթք է, Տերունական աղոթք ենք կոչում մենք և հաճախ արտասանվում է և եկեղեցիների կամարների ներքո, ժամերգությանց ընթացքին, և բնակարաններում: Ես կարծում եմ, որ այդ աղոթքը դուք բոլորդ իմանում եք: Խոսքը «Հայր մեր»-ի մասին է: «Հայր մեր»-ը համաքրիստոնեական աղոթք է և սքանչելի աղոթք է: Այդ կարճ հատվածի մեջ համարյա ամեն բան ասված է: Եվ ես պիտի ցանկայի, որ ձեզանից ամեն մեկը անգիր իմանար սկզբից մինչև վերջ: Եվ պիտի հանձնարարեի նաև մայրերին, որ իրենց զավակներին էլ սովորեցնեն «Հայր մեր»-ը: «Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի...» և այլն: Այս վերջին խոսքի վրա ուզում եմ մեկ պահ կանգ առնել՝ «եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի», այսինքն Տեր Աստված՝ Հայր մեր, թող քո կամքը կատարվի ինչպես երկնքում, այնպես էլ այստեղ՝ երկրի վրա: Եվ ո՞րն է Աստուծո կամքը: Մենք գիտենք այդ Ս. Ավետարանից: Աստուծո կամքն է, որ նախ մարդիկ երկրի վրա ապրեն և խաղաղ և արդար գործերով: Սիրով տոգորված մեկը մյուսի հանդեպ, սեր՝ ընտանեկան հարկի տակ, սեր՝ ընկերային կյանքում, դրացիների, բարեկամների շրջանակում՝ սեր

և խաղաղություն աշխատանքի վայրում: Այդ սիրո հիմքի վրա կտարածվեն խաղաղ կյանքը, խաղաղ հարաբերությունները մարդկանց միջև: Քրիստոս ծնավ խաղաղության ավետիսով և հոգին ավանդեց խաչի վրա՝ խաղաղությունը թողնելով իբրև գերագույն պատգամ, ուղեցույց: Սիրով և խաղաղությամբ է, որ կարող է երկրի վրա իրականացվել Աստուծո կամքը: Եղբայրական սեր և կյանքի խաղաղություն ենք ցանկանում մեր հայ ժողովրդին: Բայց խաղաղության մասին խոսելով չենք կարող չմտածել նաև աշխարհի խաղաղության մասին, որովհետև մեր Հայաստան աշխարհն էլ այս աշխարհից դուրս չի գտնվում: Մենք էլ այս երկրագնդի վրա ենք ապրում, և անցյալից անավոր փորձառություններ ունենք, երբ տուժել է մեր ազգը ռազմամոլ բռնակալ պետությունների պատերազմների հետևանքով: Դուք գիտեք մեր ազգի պատմությունը: Բավական է հիշել միայն 1915-ի մեծ կոտորածը՝ ցեղասպանությունը, երբ հայ ազգի կեսը բնաջնջվեց Արևմտյան Հայաստանում Օսմանյան կոչված վայրագ կառավարողների ձեռքով: Փառք Աստուծո, մենք արդեն իբրև ժողովուրդ խաղաղ և ապահով ապրում ենք Սովետական հանրապետությունների մեծ ընտանիքում, և ապրում ենք բարգավաճ ու հառաջդիմող կյանք՝ հետզհետե ծաղկումովը մեր շինարարության, տնտեսական և ազգային մշակութային, նաև մեր եկեղեցական կյանքը: Արդ աղոթող ենք, որ մեր այս խաղաղ և արդար կյանքը չխանգարվի, աշխարհի մեծամեծները իրար հետ հասկացողության լեզու գտնեն, պատերազմական միջոցների չդիմեն և համայն աշխարհի խաղաղության պայմաններում մեր ազգն էլ հետզհետե աճի, զարգանա և իրականացնի իր բոլոր արդար երազանքները: Ահա այսպիսով է որ Աստծու կամքը կլինի երկրի վրա:

Թող Տերը անսասան և միշտ անվտանգ պահպանե մեր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, թող պահպանե, պահե անվտանգ համայն մեր ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որովհետև մեր ժողովուրդի համարյա կեսը ապրում է օտար երկրների կամարների տակ: Նրանք էլ մեր հարազատ զավակներն են և մենք կազմում ենք մեկ ամբողջական և անբաժանելի ազգություն՝ թվով ավելի քան յոթ միլիոն: Թող Աստված Իր պահապան ձեռքը տարածված պահի մեր բոլորիս վրա և լսի մեր աղոթքները և Իր օրհնությունը բաշխի բոլորիս, սիրելի հավատացյալներ, պարգևելով ձեզ քաջառողջություն, երջանկություն ձեր ընտանեկան հարկերի տակ և հաջողություն պարգևի ձեր բոլոր բարի գործերին:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ հոգւով». ամեն:

Օրհնության խոսքի ավարտից հետո Նորին Սրբությունը դիմեց եկեղեցում հավաքված խուռներամ ժողովրդին, հիշեցնելով. «Քանի որ մենք ձեզ խոսեցինք նաև Տերունական աղոթքի մասին, եկեք ուրեմն այսօր սրբազան այս տաճարի մեջ, սուրբ պատարագի ընթացքում միասին երգենք «Հայր մեր»-ը»: Շատ հուզիչ էր ու խորապես տպավորիչ, որ Հայաստանի տարբեր շրջաններից աղոթքի եկած հայ հավատացյալները, անսալով Հայրապետի կոչին, միացան դպրաց դասին՝ այնքան ներդաշնակորեն երգելով Տերունական աղոթքը:

Հավարտ ս. պատարագի խուռներամ ժողովուրդը, շրջապատելով իր սիրասուն Հայրապետին, թափորի հետ միասին շարժվեց դեպի վանատուն: Հայրապետական թափորը հաճախ խառնվում էր, քանի որ հավատացյալները անընդհատ մոտենում և օրհնություն էին խնդրում վեհափառ Հայրապետից:

Ս. պատարագից հետո Նորին Սրբությունը բարեհաճեց ընդունել վանքի միաբանությանը՝ գլխավորությամբ արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանի: Վանահայրը համառոտակի զեկուցեց վանքի հոգևոր, տնտեսական և շինարարական այսօրվա վիճակի մասին: Պատասխանեց Նորին Սրբությանը հետաքրքրող հարցերին:

Ընդունելության արժանացան նաև դրպրաց դասն ու աշխատակիցները: Վեհափառ Հայրապետը, տալով իր օրհնությունը, պատվիրեց, որ ավելի մեծ նվիրումով գործեն հանուն մեր Եկեղեցու: Ի պատիվ Նորին Սրբության և իր ուղեկիցների միաբանական սեղանատանը կազմակերպվեց հանդիսավոր ճաշ: Ճաշի ընթացքում վանահայր արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյանը մի անգամ ևս հանուն միաբանության բարի գալուստ մաղթելով Նորին Սրբությանը, ասաց.

«Վեհափառ Տեր, մեր ժողովուրդը երեսուն և ավելի տարիներ է, որ արժանանում է Ձերդ Սրբության օրհնանքին: Գաղտնիք չէ, որ մեր հավատացյալ ժողովուրդը, թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում Ձեր Սրբազան անձի նկատմամբ անմնացորդ սեր ունի: Համայն հայ ժողովրդի մաղթանքն ու աղոթքը Ձեզ հետ է, քանի

որ Ձեր գործունեությամբ Հայաստանյայց Եկեղեցին ամենուրեք հասցրիք նոր բարձունքների»:

Ճաշից հետո Վեհափառ Հայրապետը մեկ անգամ ևս ցանկացավ շրջել վանքի բնակելի և տնտեսական շինությունները, գնահատելով կատարված շինարարական աշխատանքները, անելով նաև որոշ օգտակար դիտողություններ:

Չնայած մայրամուտ էր, բայց ուխտավորները դեռ լեցուն էին վանքի տարածքում. երբ հարցնում էինք ուշ մնալու պատճառը, պատասխանը լինում էր մեկ. «Սպասում ենք հանդիսավորապես ճանապարհելու մեր Վեհափառին և ստանալու իր հայրական օրհնությունները»: Հավանաբար հենց այդ էր պատճառը, որ Նորին Սրբությանն մեկնելուց առաջ ժողովուրդը կենդանի միջանցք էր ստեղծել Վեհի և իր ուղեկիցների համար:

Վերջին անգամ օրհնելով ժողովրդին, հավատացյալների բարի ճանապարհի մաղթանքներով Վեհափառ Հայրապետը, իր ուխտը կատարած, ճամփա ելավ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Ուխտդ ընդունելի Աստուծո առջև և բարի ճանապարհ, սիրելի Վեհափառ:

ՊԵՏՐՈՍ ՔՀՆ. ՄԱԼՅԱՆ
Միաբան Ս. Գեղարդա վանքի

ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏՆԵՐԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

[illegible]

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հունիսի 6-ին Դամասկոսից Երևան ժամանեց Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու պետ Մաքսիմոս Ե Պատրիարքը՝ հավատացյալների մեծ խմբով: Սրբազան Պատրիարքին դիմավորեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, հատկապես այս առիթով Մայր Աթոռ ժամանած Դամասկոսի և Հունաստանի առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

Հաջորդ առավոտյան Հոգեգալստյան սրբազան պատարագ էր Միածնաէջ Մայր տաճարում: Հոծ բազմությունը եկել էր հաղորդվելու Ս. Հոգու շնորհներին և մասնակցելու քահանայական ձեռնադրությանը:

Հնչեցին զանգերը և թափորով Մայր տաճար առաջնորդվեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը և Նորին Ամենապատվություն Մաքսիմոս Ե Պատրիարքը:

Սրբազան քահանայապետները լուռ խոկումով հետևեցին սրբազան պատարագին, ապա և ձեռնադրության արարողության: «Ողջույն»-ի պահին Վեհափառ Հայրապետը ողջագուրվեց Սրբազան Պատրիարքի հետ, և Քրիստոսով եղբայրության համբույրը տարածվեց հավատացյալների մեջ:

Հավարտ ս. պատարագի Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը պաշտոնական ճաշկերույթ տվեց Սրբազան հյուրի ժամանման առթիվ:

Վեհափառ Հայրապետը Պատրիարք Հորը բարի գալուստ մաղթելով ասաց,

[illegible]

«Ուրախ ենք, որովհետև այսօր միասին աղոթեցինք Մայր տաճարում՝ Սուրբ Հոգու Գալստյան տոնին: Բոլորս գտնվում ենք Ս. Հոգու շնորհների ներքև: Այս սուրբ պահին ես չափազանց երջանիկ եմ, որ իմ կողքին աղոթակից ունեցա մեր Ամենապատիվ եղբորը՝ Անտիոքի Պատրիարք Մաքսիմոսին, որին ընկերակցում են իր փոխանորդը՝ Նորին Սրբազնությունը, և իրենց թեմական ներկայացուցիչները՝ հարգարժան անձինք:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս, այս պահը Մեզ համար բացառիկ շնորհ է Աստծուց տրված, քանի որ պատմության մեջ, ինչքան գիտեմ, առաջին անգամն է, որ Անտիոքի մի պատրիարք այցելում է Ս. Էջմիածին: Եվ թող այս հանդիպումը մեր եղբայրությունը ավելի զորացնի և ամրապնդի մեր քրիստոնեական կյանքի ճանապարհի վրա: Մեր օրերի աշխարհը տագնապալի, գրեթե անհանգիստ չափերով ալեկոծ վիճակում է գտնվում: Եվ բնականաբար պետության ղեկավարներ, հասարակական գործոչներ, փիլիսոփաներ, տնտեսագետներ և գիտնականներ որոնում են դարմանը այս փոթորկախառն աշխարհը խաղաղեցնելու, որպեսզի մարդկությունը հասնի խաղաղության նավահանգիստ և իրականանա Հիսուսի պատգամը. «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Կարծում ենք, որ այս որոնումի մեջ Քրիստոսի Եկեղեցին առաջնահերթ առաքելությունը ունի զուցե նույնիսկ առաջնորդող ոգին դառնալու մեր օրերի համայն մարդկության: Մենք հավատում ենք, որ այս աշխարհը պիտի վերափոխվի, վերստին պայծառանա և գտնի իր երջանկության, խաղաղության ճանապարհը Քրիստոսի Ավետարանով մանավանդ: Մնում է, որ մենք՝ քրիստոնյաներս, առավել ևս մոտենանք իրար: Տարբեր Եկեղեցիներ իրենց յուրահատկությունը պահելով հանդերձ պետք է իրար մոտենան և ամրացնեն, զորացնեն համաշխարհային քրիստոնեական եղբայրությունը:

Ձեզ մաղթում եմ լիակատար քաջառողջություն: Թող Աստված օրհնի ձեր Եկեղեցին և ձեր համայն հավատացյալ ժողովուրդը: Մենք իրար ավելի մոտիկից ճանաչեցինք այս առիթով: Եվ այլևս չենք բաժանվի: Աստված բոլորիս թող լինի օգնական: Ամեն»:

Իր շնորհակալական պատասխան խոսքում Նորին Ամենապատվությունն ասաց.

«Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք ինձ ի բոլոր սրտե շնորհակալություն հայտնել Ձեզ այն լավ խոսքերի համար, որ ուղղեցիք ինձ և իմ ուղեկիցներին:

Անկեղծորեն ասեմ, երբ մտածեցինք այցելել Սովետական Միություն, պայման դրեցի, որ այս այցելությունը լինի նաև հանդիպում Ձերդ Սրբության հետ: Բոլոր ուղեկիցներս համաձայն գտնվեցին, որովհետև բոլորս ցանկանում էինք այցելել Էջմիածին՝ աշխարհում Հայ Եկեղեցու այս հիմնաքար Սուրբ կենտրոնը:

Երկար ժամանակից ի վեր ես հիացած եմ Հայոց Եկեղեցիով, և ոչ միայն Հայոց Եկեղեցիով, այլև ամբողջ հայ ժողովրդով, որովհետև դուք Քրիստոսի համար կրեցիք այն, ինչ չի կրել ոչ ոք այս աշխարհում: Դուք բոլորդ մարտիրոսների որդիներ եք: Իսկապես, երբ նայում ենք մեր եղբայրներին Լիբանանում և Սիրիայում, գիտենք, թե նրանք կարողացան փախչել այն եղեռնից, որ թուրքերն էին վճռել: Եվ ձեր երկարատև պատմության ընթացքում թուրքեր շատ են եղել:

Այդ է պատճառը, որ մենք հիացած ենք ձեր ժողովրդով: Եվ ես եկա այստեղ, որպեսզի տոգորվեմ Քրիստոսի հավատքով ու քաջությամբ: Այդ պատճառով շնորհակալ եմ Ձեզ իմ և իմ ուղեկիցների նկատմամբ ցուցաբերած եղբայրության համար:

Ձերդ Սրբություն,

Դուք խոսեցիք խաղաղության մասին, իսկ մենք խաղաղության կարիք ունենք որիշներից առավել: Մերձավոր Արևելքի ամբողջ շրջանը վտանգի մեջ է: Այդ կարող եմ ասել ես (ես արդեն մեծ եմ տարիքով), որ իմ քահանայական և պատրիարքական կյանքում ականատես եմ եղել հինգ պատերազմների. առաջինը Պաղեստինում, երբ երեխա էի, և այժմ՝ Լիբանանում: Տասներեք տարուց ավելի է, որ պատերազմի մեջ ենք Լիբանանում և չգիտենք, թե երբ կվերջանա: Դրա համար էլ խնդրում ենք Ձեր և ձեր Եկեղեցու աղերսանքը առ Աստված, որպեսզի կարողանանք պահպանել խաղաղությունը, որին տենչում են բոլորիս հոգիները:

Ինչպես ասացիք այժմ, խաղաղություն կլինի միայն Հիսուսի ճանապարհով՝ սիրով և Մերձավոր Արևելքում գտնվող բոլոր կրոնների միջև բանակցությամբ:

Թույլ տվեք ինձ նորից Ձեզ մաղթել առողջություն և երկար կյանք. մենք տարեկիցներ ենք և թող Տիրոջ կամքով առողջ լինեք և երկար կյանք ունենաք Դուք և Ձեր գործակիցները»:

Ճաշկերույթն անցավ ջերմ մթնոլորտում:

ԹՂԹԱԿԻՑ





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի Յունիսի 7-ին, կիրակի օրը, առաւօտեան, Հոգեգալստեան տօնին, Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով օրուայ պատարագիչ Գերաշնորհ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանը Մայր տաճարում կուսակրօն քահանայ ձեռնադրեց Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1985—1986 տարիների շրջանաւարտներ՝

ա. Հայկ սրկ. Չուլջեանին, ծնեալ 1959 թ. Մալաթիայում (Թուրքիա), վերանուանելով Տ. Սեպուհ աբեղայ.

բ. Ռոբերտ սրկ. Ադամեանին, ծնեալ 1963 թ. Աբադանում (Իրան), վերանուանելով Տ. Սիոն աբեղայ.

գ. Սամուէլ սրկ. Կճոյեանին, ծնեալ 1957 թ. Երևանում, վերանուանելով Տ. Նաւասարդ աբեղայ.

դ. Ռազմիկ սրկ. Իսախանեանին, ծնեալ 1963 թ. Հազարջրիք գիւղում (Իրան), վերանուանելով Տ. Սերովբէ աբեղայ.

ե. Գէորգ սրկ. Մկրտչեանին, ծնեալ 1961 թ. Եղեգնաձորի շրջանի Ռինդ գիւղում, վերանուանելով Տ. Աբրահամ աբեղայ:

Նոյն օրը Մայր տաճարում, երեկոյեան ժամերգութեան ընթացքում, կատարուեց վեղարի տուչութեան արարողութիւն, որից յետոյ նորընծաները առաջնորդուեցին Վեհարան և ստացան Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը:

Նորապսակ աբեղայ հայրերը 1987 թ. Մարտին յաջողութեամբ յանձնել էին կուսակրօն քահանայութեան համար սահմանուած քննութիւնները:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
16 Յունիս 1987 թ.



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն թուականի Յունիսի 12—15 օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարուեց Խաղաղութեան Քրիստոնէական Կոնֆերանսի «Մերձաւոր Արեւելք» ենթա-յանձնաժողովի տարեկան նստաշրջանը, որին մասնակցում էին Չեխոսլովակիայից, Յորդանանից, Ռումինիայից, Արևմտեան Գերմանիայից, Յունաստանից, Թունիսից, Ռուսաստանից, Արևելեան Գերմանիայից, Միացեալ Նահանգներից, Լեհաստանից և Բուլղարիայից ժամանած տարբեր Եկեղեցիների շուրջ երեսուն հոգևորական և աշխարհական ներկայացուցիչներ:

Նստաշրջանին իրենց մասնակցութիւնն էին բերում Խաղաղութեան Քրիստոնէական Կոնֆերանսի փոխ-նախագահ դոկտ. Գերհարդ Բասարակը և ԽՔԿ-ի Պրագայի կենտրոնում Ռուս Եկեղեցու մշտական ներկայացուցիչ հայր Գէորգի Գոնչարովը:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էր նաև Հայց. Առաքելական Եկեղեցին իր ներկայացուցիչներով:

Ժողովի նշանաբանն էր՝ «Արդարութիւն պաղեստինցի ժողովրդին»:

Նստաշրջանի բացումը կատարեց Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը աղօթքով և ողջոյնի խօսքով:

Ժողովի երեք օրերի ընթացքում մասնակիցները գործարար և համերաշխ մթնոլորտում քննարկեցին Մերձաւոր Արևելքի կրօնական, քաղաքական, տնտեսական և հասարակական կեանքի իրավիճակը՝ հաստատելով Մերձաւոր Արևելքի տագնապի շուտափոյթ լուծման անհրաժեշտութիւնը խաղաղ ճանապարհով:

Ժողովի նիստերին նախագահեց և Մերձաւոր Արևելքի հարցերին նուիրուած զեկուցումով հանդէս եկաւ Մայր Աթոռի դիւանապետ Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանը:

Յունիսի 14-ին, կիրակի օրը, ժողովականները Մայր տաճարում ներկայ եղան ս. պատարագի արարողութեանը: Նոյն օրը յետ միջօրէին նրանք այցելեցին Ս. Գեղարդի վանք և ապա Սևանայ լիճ:

Յունիսի 15-ին, նստաշրջանի աւարտին, ժողովի մասնակիցներն ընդունեցին երկու փաստաթուղթ.

ա. Հաղորդագրութիւն, որ բովանդակում է ժողովի ընթացքը և արծարծուած խնդիրները.

բ. Խաղաղութեան Քրիստոնէական Կոնֆերանսի Գործադիր Կոմիտէին յղուած Մերձաւոր Արևելքի տագնապի լուծմանը՝ վերաբերող 6 կէտերից բաղկացած յանձնարարականներ, որոնցից մէկը վերաբերում է Հայկական Ցեղասպանութեանը:

Յունիսի 15-ին, երեկոյեան, Երևանի «Արմենիա» հիւրանոցում, Հայկ. ՍՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը նստաշրջանի մասնակիցների պատուին կազմակերպեց պաշտօնական ճաշկերոյթ:

Ճաշկերոյթին ներկայ էին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Տիար Ստեփան Վարդանեանը՝ իր տեղակալներով, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասը և ժողովի բոլոր մասնակիցները:

Յունիսի 16-ին մեծարգոյ ժողովականները հրաժեշտ տուեցին Վեհափառ Հայրապետին և մեկնեցին Մայր Աթոռից լաւագոյն տպաւորութիւններով:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
18 Յունիս 1987 թ.



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1987 թ. Յունիսի 6-ին, շաբաթ օրը, Դամասկոսից Երևան ժամանեց Անտիոքի և համայն Արևելքի Յոյն Կաթողիկէ Եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատուութիւն Մաքսիմոս Ե Հաքիմը:

Ամենապատիւ Պատրիարք Հօրը այս առթիւ ուղեկցում էին, որպէս նրա շքախմբի անդամներ, Գերաշնորհ Տ. Ֆրանսուա արքեպս. Ապու-Մըխը, Հոգեշնորհ Տ. Գաբրիէլ վարդապետ Մասալուֆը և Դամասկոսի համանուն Եկեղեցու թեմական խորհրդի մի շարք անդամներ:

«Զուարթնոց» օդանավակայանում յարգարժան հիւրերին դիմաւորեցին և Ամենայն Հայոց Հայրապետի անունից բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիւանապետ Տ. Ներսէս արքեպս. Պոզապալեանը, Դամասկոսի և Յունաստանի հայոց առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքեանը և Արարատեան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսեանը:

Յունիսի 7-ին, կիրակի օրը, առաւօտեան, Տ. Մաքսիմոս Ե Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին Վեհարանում ընդունեց Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը և բարի գալուստ մաղթեց նրանց: Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի և Հայոց Հայրապետի միջև տեղի ունեցաւ զրոյց եղբայրական ջերմ մթնոլորտում: Այնուհետև քոյր Եկեղեցու բարձրաստիճան հիւրերը թափօրով առաջնորդուեցին Մայր տաճար՝ մասնակցելու Հոգեգալստեան տօնի առթիւ մատուցուող պատարագի սրբազան արարողութեանը:

Ս. պատարագին ներկա էր Սովետական Միութիւնում Ֆրանսիական Հանրապետութեան լիազօր դեսպան, Նորին Գերազանցութիւն Իւ Պանիէզը՝ իր տիկնոջ հետ:

Ս. պատարագին ներկայ էին նաև Ամենապատիւ Պատրիարք Հօր հետ Դամասկոսից ժամանած 45 սիրիացի արաբ քրիստոնեայ ուխտաւոր-

ներ, որոնք օրուայ պատարագիչ Տ. Ներսէս արքեպիսկոպոսի ձեռքից ստացան սուրբ Հաղորդութիւն:

Պատարագի ընթացքում պատարագիչ սրբազանը հոգևոր ճեմարանի հինգ շրջանաւարտ սարկաւագների ձեռնադրեց կուսակրօն քահանայ:

Յաւարտ ս. պատարագի, Վեհարանի սեղանատանը Ամենայն Հայոց Հայրապետը, ի պատիւ Տ. Մաքսիմոս Ե Պատրիարքի, տուեց պաշտօնական ճաշկերոյթ, որին ներկայ էին Պատրիարք Հօր շքախմբի հոգևորական և աշխարհական անդամները, Մայր Աթոռի եպիսկոպոսաց դասը, Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները և Սփիւռքից ժամանած այլ պաշտօնական անձինք:

Յունիսի 8-ին, երկուշաբթի օրը, Ամենապատիւ Տ. Մաքսիմոս Ե Պատրիարքը իր շքախմբի անդամներով այցելեց Ծիծեռնակաբերդ և ծաղկեպսակ զետեղեց Հայ նահատակաց յուշարձանին: Այնուհետև Մայր Աթոռի հիւրերը Երևանում այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, որտեղից ուղևորուեցին Գառնի և ապա Ս. Գեղարդի վանք: Այստեղ Սրբազան Պատրիարքը ընդունուեց վանահօր կողմից և «Հրաշափառ»-ով առաջնորդուեց եկեղեցի աղօթքի:

Նոյն օրը Մայր Աթոռի հիւրերը կրկին եղան Մայրավանքում և առիթ ունեցան այցելելու հոգևոր ճեմարան և Մայր Աթոռի թանգարանները:

Երեկոյեան Վեհափառ Հայրապետը Վեհարանի սեղանատանը, ի պատիւ հիւրերի, տուեց ողջերթի ընթրիք:

Հետևեալ օրը, Յունիսի 9-ին, Տ. Մաքսիմոս Ե Պատրիարքը հրաժեշտ տուեց Հայոց Հայրապետին և իր շքախմբով Երևանից ուղևորուեց Թբիլիսի՝ ճանապարհին այցելելով Սևանի պատմական վանքերը:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
19 Յունիս 1987 թ.



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՎԱՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հրավերով 1987 թվականի հունիսի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իր աշխատանքներն սկսեց Քրիստոնեական Խաղաղության Համաժողովի «Մերձավոր Արևելք» ենթահանձնախմբի տարեկան ժողովը: Աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչներ (ԱՄՆ, Արևմտյան Բեռլին, Բուլղարիա, ԳԴՀ, ԳՖՀ, Թունիս, Խորհրդային Միություն, Հորդանան, Հունաստան, Մեծ Բրիտանիա, Չեխոսլովակիա, Ռումինիա) հավաքվել էին քննելու Մերձավոր Արևելքի խնդիրները, հատկապես Պաղեստինի և պաղեստինցի ժողովրդի հարցերը: Ժողովի կարգախոսն էր՝ «Արդարություն պաղեստինցի ժողովրդին»: Հայ Եկեղեցու կողմից ժողովի աշխատանքներին մասնակցեցին Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Ծահբազյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Երվանդ Մելքոնյանը: Ժողովի աշխատանքներին դիտորդի հանգամանքով մասնակցեց հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի և Հունաստանի առաջնորդ գերաշնորհ Տ. Ոսկան եպս. Գալիփաքյանը:

Բացման նիստին ներկա եղավ և ժողովականներին ողջունեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր ողջույնի խոսքում ասաց.

«Խաղաղություն ընդ ձեզ:

Ես շատ երջանիկ եմ այսօր գտնվելու ձեր մեջ և բերելու ձեզ ամենքիդ Մեր սիրո ողջույնը: Պրագան կենտրոն ունեցող Քրիստոնեական Եկեղեցիների Համաժողովը բազում տարիներից ի վեր նշանակալից աշխատանք է ծավալում: Եվ այդ աշխատանքի ճանապարհին, ահա դուք հավաքվել եք այստեղ՝ լուծելու համար ձեր առջև դրված հարցերը:

Մեր օրերին համայն աշխարհը տագնապալի վիճակի մեջ է գտնվում: Երկրագնդի վրա բազմաթիվ շրջաններ կան, որոնք այդ տագնապալի վի-



Հրամանատարական խորհրդակցություն Հանրապետության բանակների ռազմավարական զորավարժությունների ավարտի առթիվ Ճակատային հրամանատարի տեսչ.

ճակն են արտահայտում: Տագնապալի շրջաններից մեկը Մերձավոր Արևելքն է: Հայտնի է բոլորիդ և ամբողջ աշխարհին, որ այդ շրջանը երկար տարիներից ի վեր փոթորկալի կացության մեջ է գտնվում և կարելի է վստահությամբ ասել, թե աշխարհի խաղաղության պահպանման գործում կարևոր միջոցառում կլինի բոլորիս համար՝ Մերձավոր Արևելքի շրջանում տագնապալի վիճակի վերացումը կամ գոնե մեղմացումը:

Եթե պետք է մտածենք ընդհանուր աշխարհի խաղաղության ապահովման մասին, անհրաժեշտ է մտածել նաև այդ շրջանի կացության բարվոքման մասին: Նույնիսկ կարծողներ կան, որ Մերձավոր Արևելքի կացության ավելի սրումը, վատթարացումը, կարող է հենց միայն ինքը, այդ շրջանը, պատճառ դառնալ համաշխարհային մի բռնկման:

Ահա թե ինչու Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվել, կնշանակի աշխատել ճոգուտ աշխարհի խաղաղության ամրապնդման: Կարծում ենք, որ քրիստոնյա Եկեղեցիներս, որոնց ներկայացուցիչներն եք դուք, ծանր մտահոգված պետք է լինենք Մերձավոր Արևելքի խաղաղեցման, այդ շրջանի ժողովուրդների համերաշխության հարցով, պաղեստինյան արդար հարցի լուծումով:

Մենք, իբրև քրիստոնյաներ և քրիստոնյա Եկեղեցիներ, չենք կարող ըմբռնել, թե որևէ հարց չի կարող խաղաղությամբ լուծվել: Մենք մերժում ենք տագնապալի կացությունները պատերազմի միջոցով լուծելու գաղափարը:

Բավական է ինչքան մեր երկրագունդը դարեր շարունակ տառապեց պատերազմական գործողությունների հետևանքով: Բավական է այն, ինչ որ դեռևս կատարվում է այսօր մեր աչքի առջև աշխարհի տարբեր շրջաններում, երբ մարդկային արյունը հոսում է առատորեն:

Ես իմ մտքերն եմ արտահայտում ոչ միայն իբրև քրիստոնեական Եկեղեցու պատասխանատու ներկայացուցիչ, այլ նաև իբրև հայ ժողովրդի մեկ զավակը: Մեր հայկական Եկեղեցին, հայ ժողովուրդը դարեր շարունակ նահատակվել է այլ բռնատիրական պետությունների պատերազմների հետևանքով, մեր հայրենի հողի վրա: Հատկապես մենք չենք կարող մոռանալ առաջին համաշխարհային պատերազմը, որի ընթացքում ամբողջ արևմտահայաստանի բնակչությունը՝ շուրջ երկու միլիոն հայեր, կոտորվեցին Օսմանյան կայսրության ձեռքով: Մի կոտորած, որը հանդիսացավ մեր դարի առաջին ցեղասպանությունը: Ահավասիկ արդյունքները, հետևանքները պատերազմների:

Ահա թե ինչու ես իմ ողջ գիտակցությամբ մաղթում եմ, որ ձեր աշխատանքները հաջողությամբ առաջ ընթանան այստեղ, և դուք կարողանաք ձեր նպատակը բերել Մերձավոր Արևելքի՝ այդ խռովահույզ շրջանի խաղաղեցման խնդրին:

Թող Աստված մնա ձեզ օգնական և մարտակից:

Այստեղ՝ գտնվում ենք Հայաստանյայց Եկեղեցու կենտրոնում՝ Սուրբ Էջմիածնում:

Թույլ տվեք ձեզ փոխանցել այս սուրբ տաճարից, Ս. Էջմիածնից Աստուծո օրհնությունը: Ամեն»:

Ապա ժողովը ընտրեց նախագահություն և խմբագրական հանձնաժողով: Ժողովի բոլոր նիստերին նախագահ ընտրվեց գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Երկրորդ նիստին, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, զեկուցումով հանդես եկավ Ներսես սրբազանը՝ նյութ ունենալով «Ուղիներ և միջոցներ՝ Մերձավոր Արևելքում խաղաղության և արդարության համար»: Սրբազան հայրը հանգամանորեն վերլուծեց Մերձավոր Արևելքի իրավիճակը և կոչ արեց ուժերը միավորել՝ կողմերի միջև անհապաղ խաղաղության հասնելու համար՝ փոխադարձ հարգանքի վրա հիմնված բանակցություններով: Անդրադարձավ նաև այդ շրջանի հայության կյանքին և հատկապես ընդգծեց Վեհափառ Հայրապետի կոչերը Մերձավոր Արևելքի հայությանը՝ մնալու խաղաղության դիրքերում: Սրբազան հոր զեկուցումը լսվեց մեծ հետաքրքրությամբ:

Հաջորդ նիստերին զեկուցողները անդրադարձան Մերձավոր Արևելքի զանազան խնդիրներին՝ հիմնականում շեշտը դնելով պաղեստինցի ժողովրդի արդար դատի շուտափույթ լուծման անհրաժեշտության վրա բանակցությունների և փոխըմբռնման ճանապարհով, հատկապես մատնանշեցին ՔԽՀ-ի դերն ու ջանքերը՝ կողմերի միջև խաղաղ հաշտության հասնելու համար:

Ժողովը ընդունեց երկու փաստաթուղթ, համատեղ Հաղորդագրություն և Հանձնարարականներ ՔԽՀ-ի Գործադիր Կոմիտեին: Առաջին փաստաթուղթը ունի նկարագրական բնույթ, որտեղ արտացոլվել են ժողովի ընթացքը և զեկուցումների հիմնական դրույթները: Երկրորդ փաստաթուղթը բովանդակում է հետևյալ հիմնահարցերը. **ա.** Մերձավոր Արևելքին նվիրված միջազգային համաժողովի գումարում, **բ.** 1989 թվականը ՄԱԿ-ի կողմից Պաղեստինի Տարի հայտարարելու մասին, **գ.** Քրիստոնեական Խաղաղության Համաժողովի կողմից պատգամավորություն ուղարկել Մերձավոր Արևելք, **դ.** Կիպրոսի հարցը, **ե.** Իրան-Իրաք պատերազմը, և **զ.** Հայկական ցեղասպանությունը, որտեղ ասվում է. **«Ժողովի մասնակիցները հաստատեցին, որ հայ ժողովրդի մի մասը ապրում է Սովետական Հայաստանում խաղաղ և ապահով:** Նրանք անդրադարձան նաև այն փաստին, որ 20-րդ դարում առաջին մեծագույն ոճիրը մարդկության դեմ հայ ժողովրդի ցեղասպանությունն էր, իրականացված օսմանյան Թուրքիայի կողմից առաջին հնամաշարհային պատերազմի ժամանակ, 1915—1916 թվականներին, երբ հայ ժողովուրդը արտաքսվեց իր սեփական երկրից, և նրանց ավելի քան մեկ ու կես միլիոնը բնաջնջվեց: Վերապրողները ապաստան գտան նաև Մերձավոր Արևելքի հյուրընկալ արաբական երկրներում: Ժողովը հանձնարարում է, որ Գործադիր Կոմիտեն կոչ անի ներկա թուրքական կառավարությանը՝ լսելու արդարության ձայնը և ընդունելու, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել, այդպիսով ուղի հարթելով հայ ժողովրդի դեմ գործված ոճիրի միջազգային ճանաչման: Մասնակիցները նշում են նաև, որ այդպիսի ոճիրի դատապարտման ժխտումը դուռ բացեց նման ոճիրների իրականացման»:

Հունիսի 14-ին ժողովի բոլոր մասնակիցները ներկա եղան սրբազան պատարագին, համատեղ աղոթքով խաղաղություն հայցելու աշխարհին և հատկապես Մերձավոր Արևելքի շրջանին: Օրվա պատարագիչն էր գերաշնորհ Ոսկան եպս. Գալփաքյանը, որը հավուր պատշաճի քարոզ խոսեց և ասաց.

««Եւ ասաց Աստուած. արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան.. . Եւ արար Աստուած մարդն ըստ պատկերի իւրում»:

Ահա Ծննդոց գրքի խոսքերը, որոնք վերաբերում են մարդու ստեղծագործության, թե ինչպես ինքը՝ Աստված տիեզերքը վեց օրերի ընթացքում կատարելության՝ գերագույն գեղեցկության և գերագույն բարության հասցնելուց հետո, ստեղծեց մարդը, որպեսզի տիրի, իշխի ու վայելի այդ բոլորը: Ինչպես գիտենք նույնպես Ծննդոց գրքից, Աստված ամբողջ բարությունը մարդուն հանձնելուց հետո զգուշացրեց նախամարդուն՝ Ադամին, հեռու մնալ չարի և բարու ծառից, չճաշակել նրա պտուղը: Բայց մարդու ձգտումը Աստծուն հասնելու և սատանայի խաբկանքները պատճառ դարձան, որ մարդը չհնազանդվի Աստուծո հրահանգին և ճանաչի բարու կողքին նաև չարը: Երբ Ադամն ու Եվան ճանաչեցին նաև չարը և արտաքսվեցին դրախտից, մարդու երանությունը փոխվեց չարչարանքի և աղետի: Բոլոր ժամանակներում կատարված բոլոր աղետներից ամենամեծը այն էր, որ մարդը ճանաչեց չարը. սա մեծագույն աղետն է տիեզերքի մեջ, որն իր նմանը չունի, քանի որ նա է մայրը բոլոր աղետների: Եվ ահա սկսեց մարդու համար բարու և չարի պայքարը այս աշխարհի վրա: Եվ մենք ամենայն հստակությամբ տեսնում ենք Ադամի և Եվայի որդիների՝ Կայենի և Աբելի մեջ, թե ինչպես Կայենը սպանեց իր բարի և աստվածահաճո եղբորը: Կարծեք մարդը դարձավ փորձանոթ բարու և չարի: Մարդը ճանաչեց չարը, և չարը դարձավ տիրող և իշխող, զորավոր և ամենակարող: Այսպես շարունակվեց և շարունակվում է մինչև այսօր պայքարը բարու և չարի միջև: Բայց մենք՝ այսօրվա մարդիկ, ունենք հնարավորությունը առավել ճանաչելու բարին և գործելու բարու հետ, որովհետև, ինչպես շարականագիրն է ասում, երբ առաջին Ադամը մեղք գործելով մերկացավ ու վտարվեց դրախտից, երկրորդ Ադամը, փրկելու համար աշխարհը, եկավ կորուսյալներին այցելության: Հիսուս երկրորդ Ադամն էր, որ եկավ, որպեսզի կարողանա ճզմել չարի գլուխը և աշխարհում ստեղծել երկնքի թագավորությունը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ բարու հաղթանակը չարի դեմ: Այսօր, երբ մենք հավատացյալներն ենք և հավատավորներն ենք այն մեծ ճշմարտության, որ Քրիստոսի Հարությունն է, թույլատու չէ և ոչ էլ թույլատրելի, որ մենք, այնպես, ինչպես Ադամի որդիները, իրար սպանենք և դառնանք Կայեն, որ պատասխանեց Աստծուն և ասաց՝ ես իմ եղբոր տերը չեմ: Քրիստոնյա մարդը՝ իր Տիրոջ ճշմարիտ որդին, պետք է տեր լինի իր եղբորը: Բայց եթե նա հետևի Կայենին, ուրեմն ինքն իսկ վտարում է իրենից Աստծու հոգին և դառնում մարդասպան: Միայն մարմնական սպանությունը չէ, որ մարդասպանություն պետք է համարել: Չէ՞ որ Պողոս առաքյալն ասում է. «Հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ և դուք Աստուծոյ տաճար էք». հետևաբար՝ մարդ եթե հետևի Կայենին՝ փառամոլությամբ, ամբարտավանությամբ, չարախոսությամբ ապրի, չի՞ սպանի Աստուծո հոգին, որ իր մեջ է:

Այսօր մենք բարու հաղթանակի համար ենք աղոթում, որպեսզի աշխարհի վրա բարին հաղթանակի, և կայեններ տեղ չունենան երկրում: Ճիշտ այդ պատճառով է, որ աշխարհի քրիստոնյա Եկեղեցիները անում են իրենց ամենակարելին վասն խաղաղության: Եվ պատահական չէ, սիրելիներ, որ այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում է տեղի ունենում Քրիստոնեական Խաղաղության Համաժողովի Մերձավոր Արևելքի հանձնախմբի ժողովը: Հյուրեր, ժողովականներ, որոնք եկել են հեռավոր Միացյալ Նահանգներից, Արևելյան և Արևմտյան Գերմանիաներից, Ռումինիայից, Բուլղարիայից, Հունաստանից, Չեխոսլովակիայից, արաբական երկրներից, նրանք հավաք-

վել են միասին՝ խոսելու, որոնելու համար միջոցը՝ Մերձավոր Արևելքում խաղաղության համար: Այո, մարդիկ, որոնք փորձում են հեռացնել աշխարհից կայեններին, որպեսզի աշխարհի մեջ տիրակալի բարին, այսինքն՝ խաղաղությունը: Մենք ողջունում ենք նրանց այս սուրբ կամարների տակ և աղոթում նրանց գործի հաջողության համար, հաջողություն բարու՝ ընդդեմ չարի, խաղաղության՝ ընդդեմ պատերազմի: Մենք ողջունում ենք նրանց այս հարկի տակ, որտեղ դարեր շարունակ Հայ Եկեղեցին երգել և պաղատել է խաղաղություն:

Սիրելի հավատացյալներ, խնդրում ենք բոլորիցդ, որ աղոթեք վասն խաղաղության ամենայն աշխարհի, որպեսզի մարդիկ, հեռացած կայենական ձգտումներից, ապրեն բարությամբ, արդարությամբ, աստվածահաճո կյանքով և վերագտնեն Աստուծո պատկերն ու նմանությունը ըստ արարչագործության, ամեն»:

Նույն օրը ժողովի մասնակիցները այցելեցին դարավոր Ս. Գեղարդա վանք, հիացան հայ հանճարի ժայռափոր կերտվածքով, ապա գնացին Սևան՝ զմայլվելու Հայաստանի գոհարի գեղեցկությամբ:

Հունիսի 15-ին, երեկոյան, ժողովի մասնակիցների պատվին պաշտոնական ճաշկերույթ տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը: Ճաշկերույթին ներկա էին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը՝ եպիսկոպոսաց դասով, Խորհրդի նախագահ տիար Ս. Վարդանյանը՝ իր տեղակալների՝ տիար Ա. Հասրաթյանի և Ռ. Զարգարյանի ուղեկցությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներն ու ժողովի մասնակիցները: Տիար Ստեփան Վարդանյանը, ողջունելով ժողովի մասնակիցներին, խոսեց ժողովի նպատակների կարևորության, ՔԽՀ-ի մարդասիրական գործունեության մասին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի փառավոր անցյալի և ծաղկուն ներկայի մասին՝ Եղեռնից վերապրած հայ ժողովրդի բարգավաճ Հայրենիքի և ամուր պետականության պայմաններում, Ամենայն Հայոց կաթողիկոսի խաղաղասիրական գործունեության և Սովետական Միության՝ զինաթափման և աշխարհը միջուկազերծ դարձնելու հետևողական ջանքերի մասին: Հյուրընկալության, ժողովը անցկացնելու հարմարավետ պայմաններ ստեղծելու և բոլոր տեսակի աջակցությունների համար, ինչպես նաև իրենց մատուցված պատվի համար շնորհակալության խոսքով հանդես եկան ժողովի բազմաթիվ մասնակիցներ:

Վերջում օրհնության խոսք ասաց Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի՛ եղբայրներ և բարեկամներ, ինձ համար երջանկություն է ողջունել Մերձավոր Արևելքի հանձնաժողովի աշխատանքի ավարտը: Հոգեպես գոհ եմ, որ այդ ավարտը ընդգծվում է այստեղ այս պահին, այս ճաշի սեղանի շուրջ, ուր մեզ հրավիրել է մեր պետության ներկայացուցիչ տիար Ստեփան Վարդանյանը՝ տնօրեն Սովետական Հայաստանի կրոնից գործերի: Ես կուզեի Մայր Աթոռիս անունով շնորհակալություն հայտնել պրն. Վարդանյանին: Այս պարագան մի անգամ ևս ընդգծում է այն անկեղծ, բարյացակամ վերաբերմունքը, որ մեր՝ Սովետական Հայաստանի իշխանությունը ունի դեպի մեր Եկեղեցին և դեպի մեր եկեղեցական գործունեությունը: Մենք այդ բարյացակամ վերաբերմունքը վայելում ենք տևապես, անշուշտ նաև խաղաղության պայքարի գծով, որովհետև հայտնի է

աշխարհով մեկ, թե Սովետական Միությունը իր ամենաբարձր մակարդակից սկսած երկար տարիներից ի վեր խաղաղության դրոշի պաշտպան է հանդիսանում: Այս իրողությունը մեզ քրիստոնյաներիս համար հոգեկան մխիթարություն է: Ես երբեմն մտածում եմ, եթե այդպես չլիներ մեր պետության տրամադրությունը, ինչքան դժվար պետք է լիներ մեր՝ քրիստոնյաներիս համար այստեղ խաղաղության համար աղոթել, գործել ու աշխատել:

Այս հանձնաժողովի աշխատանքների առիթով, ես ուրախությունը ունեցա հանդիպելու բազմաթիվ երկրներից եկած ներկայացուցիչներին: Ես զգացի, այո, որ բոլորի սրտից բխում էին բարի զգացմունքներ դեպի մեր Եկեղեցին և դեպի իմ համեստ անձը: Շնորհակալ եմ բոլորից: Հատկապես ուզում եմ շեշտել այն եղբայրական ողջույնի խոսքը, որը բերեց Ռումեն Եկեղեցու ներկայացուցիչ՝ հայր պրոֆեսոր Աբրուդան Դիմիտրուն, Նորին Սրբություն Ռումինիայի Պատրիարք Թեոկտիստի կողմից, մի ողջույն, որն իմ սրտիս բացառիկ ջերմությամբ է խոսում, որովհետև ես կարևոր չափով Ռումինացի եմ, և Ռումեն լեզուն իմ մայրենի լեզուն է գրեթե: Եվ, մասնավորապես, Թեոկտիստ սրբազան Պատրիարքի հետ եղբայրական զգացումներով կապված եմ այն օրերից, երբ ես Ռումինիայում էի գործում: Վստահ եմ, որ պրոֆեսոր տեր հայրը, իմ այս զգացումների թարգմանը պիտի հանդիսանա այնտեղ: Նույնպես խորապես տպավորվեցի Դոմետիան եպիսկոպոսի միջոցով ընդունելով Բուլղարիայի Պրավոսլավ Եկեղեցու Մաքսիմ Սրբազան Պատրիարքի ողջույնները, որի հետ անձնապես վաղուց բարեկամական կապերով կապված եմ: Եվ Բուլղարիան էլ նույնպես ինձ համար հարազատ երկիր է: Շնորհակալություն այս ողջույնների համար: Եվ վերջապես ուզում եմ իմ շնորհակալությունս հայտնել դոկտոր Գերհարդ Բասարակին և հայր Գոնչարովին, որոնք Պրագայից են գալիս և, որոնք բերեցին ինձ դոկտ. Կարոլի Տոթ նախագահի և ընդհանուր քարտուղար հայր Միրեժովսկու ողջույնները: Ողջույններ ընդունեցի նաև սրբազան միտրոպոլիտ Ֆիլարետի կողմից: Այս ողջույններն ու բարեմաղթությունները ինձ ոգեշնչում են և զորացնում իմ աշխատանքի ճանապարհի վրա:

Ես ուրախությամբ լսեցի, որ շուտով պիտի նշվի երեսուն տարիների վաստակը Պրագայի Քրիստոնեական Եկեղեցիների Համաժողովի: Մեր սրտին մոտ է այս տարեդարձը, որովհետև հենց սկզբից, առաջին օրերից Հայ Եկեղեցին Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և Վրացական Օրթոդոքս Եկեղեցու հետ միասին գործակցաբար մասնակցել է նրա ստեղծման ու կազմակերպման գործին: Այս կազմակերպության աշխատանքի արդյունքները երեսուն տարիների ընթացքում, իմ կարծիքով, շոշափելի են, գնահատելի և արժեքի մեր հարգանքին: Նա հանդիսանում է խաղաղության և արդարության ջահերից մեկը միջազգային հորիզոնի վրա: Հարց եղավ այստեղ, թե մեր աղոթքներով, մեր ժողովական որոշումներով արդյոք պիտի կարողանա՞նք մեր խոսքը հասցնել պետությանց ղեկավարներին, տեղից շարժելու և ապահովելու համար խաղաղության գործի հաղթանակը: Ես կարծում եմ, որ անմիջական, դրական, վերջնական արդյունքի հավանաբար չենք հասնելու շուտով, բայց վստահ եմ, թե ձեր աշխատանքը կարևոր նպաստ է՝ խաղաղության և արդարության հաղթանակի համար: Համենայն դեպս ՔԽՀ-ի ձայնը քրիստոնեական խղճի և մարդասիրության ձայնն է: Քրիստոնյաներիս համար խաղաղությունը պարզապես վերացական մի գաղափար չէ, այլ քրիստոնեական ապրում, որ բխում է մեր ավետարանական

առաքելությունից: Կարծում եմ, որ մենք բոլորս տոգորված ենք սիրով դեպի բոլոր մարդիկ և դեպի բոլոր ժողովուրդները անխտիր: Մեզ համար թշնամի ժողովուրդներ չկան, որովհետև վստահ ենք, թե բոլոր ժողովուրդների լայն զանգվածները խաղաղության, արդարության և ազատության ճանապարհով են ուզում ապրել:

Քանի որ վերջին պահն է, ես կրկին իմ գոհունակությունն եմ հայտնում ձեր կատարած աշխատանքի համար: Վստահ եմ, որ ձեր աշխատանքը ինչ-որ մի տեղ պիտի արձանագրվի հարգանքով, գնահատանքով, պաղեստինյան արդար գործին ի նպաստ:

Թող Աստված մեզ և ձեզ բոլորիդ առաջնորդի դեպի նավահանգիստը խաղաղության: Բարի ճանապարհ:

Ս. Էջմիածնից և իմ սրտից տարեք օրհնություն»:

Հաջորդ օրը, հունիսի 16-ին, ժողովի մասնակիցները հրաժեշտ տվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ մեկնելու համար իրենց երկրները, այն հավատքով, որ կատարեցին մարդասիրական գործ, և այն հույսով, որ իրենց ջանքերը կարդյունավորվեն՝ խաղաղություն բերելով Մերձավոր Արևելքին:

Ե. ՄԵԼՔՈՆՅԱՆ



ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Պայծառ առավոտ էր: Հայաստանի հունիսյան բարկ արևով ողողված առավոտ: Մայր տաճարի կամարների տակ արևի լույսը ընդելուզված էր խունկի բուրմունքին և Հոգեգալստյան սրբազան պատարագի հոգեպարար աղոթքին:

Խորանի առջև ծունկի էին եկել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1985 և 1986 տարիների հինգ շրջանավարտներ, բոլորն էլ Հայաստանի արևով սնված. Հայկ սրկ. Զուլչյան, Ռոբերտ սրկ. Ադամյան, Սամվել սրկ. Կճոյան, Ռազմիկ սրկ. Իսախանյան և Գևորգ սրկ. Մկրտչյան: Բոլորն էլ հաջողությամբ պաշտպանել էին իրենց ավարտաճառերը՝ ապացուցելով ինքնուրույն գիտական աշխատանք կատարելու իրենց կարողությունը:

Եվ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, գնահատելով սարկավագների իմացական պատրաստականությունն ու պատրաստակամությունը՝ իրենք իրենց ընծայելու Հայ Եկեղեցու ծառայության, ընդառաջեց նրանց խնդրանքին՝ դառնալու կուսակրոն քահանաներ:

Ձեռնադրությունը, ըստ Հայ Եկեղեցու կանոնի, կատարեց օրվա պատարագիչ, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և նորընծաներին անվանադրեց. Հայկին՝ Սեպուհ, Ռոբերտին՝ Սիոն, Սամվելին՝ Նավասարդ, Ռազմիկին՝ Սերովբե, և Գևորգին՝ Աբրահամ: Պատարագիչ սրբազանը ոգեշունչ քարոզով հույս և հաստատակամություն հայտնեց, որ նորընծաները միշտ կմնան իրենց կոչումի բարձրության վրա և այսօր, Ս. Հոգու շնորհներով հարստացած, իրենց կյանքը կնվիրաբերեն հայ ժողովրդին, Հայ Առաքելական Եկեղեցուն և նրա դարավոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Պատարագիչ սրբազանն ասաց.

««Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս»:

Այսօր, սիրելի հավատացյալ ժողովուրդ, Հոգեգալստյան տոնն է: Սրանից հիսուն օր առաջ քրիստոնեական բոլոր Եկեղեցիները միասնաբար տոնակատարեցին Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը: Այդ օրվանից անցել են հիսուն օրեր: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, իր հրաշալի Հարությունից հետո Իր աշակերտների մեջ հայտնվեց Վերնատան մեջ և նույնիսկ նրանցից ամենակասկածավորին՝ Թովմասին, ցույց տվեց իր կողը և իր ափերը՝ վստահեցնելու համար նրան, որ իսկապես ինքը չարչարված, խաչված, թաղված Հիսուսն



Մի սաղ ձեռնադրության ցուցադրությունից

է, որ Հարություն է առել: Այս գեղեցիկ հարության հիշատակի օրվանից անավասիկ հիսուն օրեր անցան: Քրիստոս եղավ իր աշակերտների հետ, նրանց հետ մասնակցեց նույնիսկ ձկնորսության և սրանից տասը օր առաջ համբարձման լեռան վրա իր աշակերտներին վերջին իր պատգամները տվեց. Գնացեք, ուսուցեք ամբողջ աշխարհին, դարձի բերեք անհավատներին, մկրտեցեք նրանց հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո ասելով: Եվ ապա համբարձավ երկինք, և իր աշակերտները զրկվեցին նրա տեսությունից: Բայց իր Համբարձումից առաջ նա պատվեր է տվել, որ ըստ սովորության իր աշակերտները հավաքվեին Վերնատան մեջ և այնտեղ սուրբ պատարագ մատուցեին, հացը կրտրեին և ուտեին և գինին ըմպեին, որպեսզի հիշեին նրան վերջին ընթրիքի պահին, ուր Քրիստոս ասաց, թե այս հացը իմ մարմինն է և այս գինին իմ արյունն է, և կատարեցեք այս՝ ամեն անգամ հիշելով ինձ ձեր մեջ: Քրիստոսի աշակերտները Համբարձումից հետո Վերնատան մեջ նույն հավատքով, նույն համոզումով, նույն տեսիլքով և նույն սպասումներով աղոթում էին: Մոտեցել էր հրեաների Պենտեկոստեի տոնը: Եվ այդ օրը հանկարծ, առավոտ կանուխ, զարմանալի մի ձայն լսվեց Երուսաղեմ քաղաքում, մի հզոր դղրդյուն: Ամեն մարդ զարմացավ, թե ինչ պիտի տեղի ունենա: Այդ պահին երկնքից Սուրբ Հոգին իջավ Վերնատան մեջ, հրեղեն լեզվի կերպարանքով, և հանգչեց առաքյալների և բոլոր աշակերտների վրա: Նրանք սկսեցին խոսել իրենց չիմացած լեզուներով: Նրանք սկսեցին բարբառել այն լեզուներով, որ երբեք հավանաբար չէին լսել: Եվ այդ օրերին Երուսաղեմ ուխտի եկած հրեա և օտար ուխտավորներ, երբ լսում էին, որ առաքյալները բարբառում են իրենց լեզուներով, զարմացած ասում էին. Այս Գալիլիացի ձկնորսները ո՞ւրտեղից են լսել և սովորել մեր ցեղական լեզուները: Նրանք խոսում էին այն օր նույնիսկ հայերեն լեզվով: Եվ մարդիկ, որովհետև միշտ կասկածամիտ են, սկսեցին ասել, թե հավանաբար Հիսուսի աշակերտները հարբած էին: Պետրոս առաքյալն ասաց. Այս բարբառումը, այս խորությունը, այս կարողությունը Սուրբ Հոգու միջոցով Պենտեկոստեի օրը իջավ մեզ վրա՝ զորացնելով մեզ, վերանորոգելով մեզ և մեր բոլոր նպատակներին ուղղություն տալով:

Սիրելի հավատացյալներ, Սուրբ Հոգու իջման հիշատակի օրն է այսօր: Մենք ինչքան ուրախ ենք, որ Սուրբ Էջմիածնի այս դարավոր կամարների տակ դուք բոլորդ հավաքվել եք հավանաբար աշխարհի տարբեր երկրներից: Մենք շատ ու շատ երջանիկ ենք այսօր, որ մեր մեջ հյուրաբար գտնվում է Հոգեգալստյան տոնի այս սրբազան օրը, Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք Մաքսիմոս Հինգերորդը իր շքախմբով: Ինչպես նաև շատ երջանիկ ենք, որ մեր մեջ են տեր և տիկին դեսպանը Ֆրանսիայի՝ այս սրբազան տոնի առթիվ, ինչպես նաև այն քառասունհինգ ուխտավորները, որոնք եկան Սրբազան Պատրիարքի հետ Սուրբ Էջմիածին այսօր՝ իրենց ուխտը կատարելու, և բազմաթիվ հայ եղբայրներ և քույրեր Լիբանանից, Արգենտինայից ու Բելգիայից, Եվրոպայի զանազան քաղաքներից: Այսօր ձեր ներկայությամբ և ձեր վկայությամբ Սուրբ Էջմիածնի այս կամարների տակ Վեհափառ Հայրապետի հրամանով մենք ձեռնադրեցինք հինգ հոգևոր եղբայրներ մեզ համար: Նրանք Սուրբ Հոգու զորությամբ այսօր լցվեցին, և նրանց վրա իջավ աստվածային և երկնային անսպառ շնորհը, նրանց հոգին գեղեցկացնելու, ընդանց տալու համար քահանայության ծառայության տեսիլքը և ուժը, որպեսզի ընդանք հավատարմորեն, անկեղծ կերպով, սրտանց ծառայեն Հայաստանյայց Սուրբ Եկեղեցում, իրենց Աստծու կողմից պարգևված երկար տարիների ընթացքում: Միասնաբար, սիրելի հավատացյալներ, աղոթենք, որ Սուրբ Հոգին ներգործի ընդանց վրա, ուժ և կարողություն պարգևի նրանց՝ նրանց ապագա կյանքի ընթացքին:

Սիրելի հավատացյալներ, Հոգեգալուստի տոնը տոն է հավատացյալ քրիստոնյայի, որովհետև Սուրբ Հոգին Հոգեգալստյան տոնի առթիվ բաշխում է մարդկանց երկնավոր առատ շնորհներ, նրանց գեղեցկացնում է, պայծառացնում է, նրանց տալիս է կյանքի նպատակ և ճանապարհ: Եվ այս օրերին, աշխարհի տակնուվրա և փոթորկուն այս շրջանին, ինչքան անհրաժեշտ է, որ մենք ստանանք Սուրբ Հոգու շնորհները՝ սիրելու իրար, խաղաղություն բերելու աշխարհին, եղբայրսիրություն տարածելու, էկումենիկ հոգիով լցվելու, իրար սիրելու և հարգելու, և հավասար, որպես եղբայրներ իրար զգալու, ինչքան կարևոր է, որ աշխարհը հանդարտվի, խաղաղվի Աստուծո կամքով և զորությամբ:

Քիչ առաջ իբրև բնաբան ընտրած էի Սուրբ Գրիգոր Նարեկացու՝ մեր Եկեղեցու մեծ բանաստեղծ և սրբազան աղոթող Գրիգոր Նարեկացու բառերը, խնդրելով և

կրկնելով. Հերկիր, ով Տեր, իմ սրտի բանական անդաստանները, և այնտեղ ցանիր այն շնորհները, որ Դու տալիս ես: Այդ շնորհները թող ծաղկեն, պտղաբերվեն, ծաղկեն մեր կյանքի ընթացքում: Թող Սուրբ Հոգու շնորհները մեր վրայից անպակաս լինեն և մեզ բարեզարդեն, այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Նույն օրը, երեկոյան, սրբազան հայրը կատարեց նաև վեղարի տվչության արարողությունը:

Սրբազան պատարագին ներկա էին Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսը և հյուրաբար Մայր Աթոռ ժամանած Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու պետ Ամենապատիվ Մաքսիմոս Ե Պատրիարքը:

Պատարագին ներկա էր նաև Խորհրդային Միությունում Ֆրանսիայի դեսպան տիար Իվ Պանիեզը՝ իր տիկնոջ հետ:

Բազմաթիվ սփյուռքահայեր նույնպես ապրեցին ձեռնադրության և պատարագի հոգևոր բերկրանքը:

ԹՂԹԱԿԻՑ



Տ. ՍԵՊՈՒՀ ԱԲԵՂԱ ՉՈՒԼՋՅԱՆ

Ծնվել է 1959 թ. մարտի 24-ին, Թուրքիայի Մալաթիա քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է Կ. Պոլսի Ներսիսյան վարժարանում:

1969 թ. ընտանիքով հայրենադարձվել է Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում, որտեղ շարունակել է միջնակարգ կրթությունը:

1974 թ. ընդունվել է Լենինականի երկաթուղային տեխնիկում:

1978 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1979 թ. զորակոչվել է սովետական բանակ և զորացրվելուց հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

1985 թ. դեկտեմբերին սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1986 թ. մարտին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ղուկաս Խարբերդացու թարգմանչական գործունեությունը» թեմայով և արժանացել **բավարար** գնահատականի:

Հետ ձեռնադրության շարունակում է աշխատանքը Վեհարանում՝ որպես քարտուղար:



Տ. ՍԻՈՆ ԱԲԵՂԱ ԱԴԱՄՅԱՆ

Ծնվել է 1963 թ. սեպտեմբերի 20-ին, Իրանի Աբադան քաղաքում:

1978 թ. ընտանիքով հայրենադարձվել է Հայաստան և բնակություն հաստատել Էջմիածին քաղաքում:

1970—1980 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 6 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1985 թ. դեկտեմբերին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. մարտին պաշտպանել է ավարտաճառ՝ «Սարգիս Շնորհալու հորդորակները» թեմայով և արժանացել լավ գնահատականի:

Հետ ձեռնադրության աշխատանքի է նշանակվել Վեհարանում որպես քարտուղար:





Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ԱԲԵՂԱ ԿՃՈՅԱՆ

Ծնվել է 1957 թ. սեպտեմբերի 18-ին, Երևան քաղաքում:

1976 թ. սովորել և ավարտել է Երևանի № 32 միջնակարգ դպրոցը:

1977—79 թթ. ծառայել է սովետական բանակում:

1981 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1985 թ. դեկտեմբերին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. մարտին ավարտաճառ է պաշտպանել՝ «Հովհաննես Դամասկացին և նրա «Բանք ընդդիմադրականք ի քակտումն հերձուածողաց Յակոբիկ Ասորոց» թեմայով և արժանացել **գերազանց** գնահատականի:

Հետ ձեռնադրության նշանակվել է Մայր Աթոռի եկեղեցական արվեստի բաժնի վարիչ:





Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱԲԵՂԱ ԻՍԱԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1963 թ. Իրանի Հազարջրիբ գյուղում:

1969 թ. ընտանիքով հայրենադարձվել է Հայաստան և բնակություն հաստատել նախ Հոկտեմբերյան, ապա Էջմիածին քաղաքներում:

1970—80 թթ. սովորել և ավարտել է Էջմիածին քաղաքի № 1 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1981—83 թթ. ծառայել է սովետական բանակում:

Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1986 թ. փետրվարին սարկավագ է ձեռնադրվել ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1986 թ. դեկտեմբերին ավարտաճառ է պաշտպանել՝ «Բարսեղ Մաշկևորցու բարոյագիտական հայացքները» թեմայով և արժանացել **քաջալավ** գնահատականի:

Հետ ձեռնադրության աշխատանքի է նշանակվել Մայր Աթոռի Ալեք և Մարի Մանուկյան Գանձատանը:



Տ. ԱԲՐԱՀԱՄ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Ծնվել է 1961 թ. հունվարի 7-ին, Եղեգնաձորի շրջանի Ռինդ գյուղում:

1968—78 թ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1980—82 թթ. ծառայել է սովետական բանակում:

Զորացրվելուց հետո ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1986 թ. փետրվարին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. դեկտեմբերին պաշտպանել է ավարտաճառ՝ «Սյունյաց մետրոպոլիտությունը Օրբելյանների ժամանակ» թեմայով և արժանացել **գերազանց** գնահատականի:

Հետ ձեռնադրության շարունակում է աշխատանքը «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 20-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը:

* * *

Հունիսի 21-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ» (Ա. Դավրիժեցի) բնաբանով (Տես էջ 50):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունիսի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

* * *

Հունիսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

* * *

Հուլիսի 5-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Լերինք ամենայն այսօր ցնծացեն ընդ մեծապայծառ փառսն Սեպուհոյ գերազանց լերինն, քանզի ի նմա բնակեցաւ սուրբն Գրիգոր՝ սիւն լուսոյ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ» (Շարական) բնաբանով:

* * *

Հուլիսի 9-ին, հինգշաբթի.—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց եկեղեցու վանահայր

Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Հուլիսի 12-ին, կիրակի,—Գիտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն վրդ. Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո» (Ղուկ. Ա 42—43) բնաբանով:

*
* *

Հուլիսի 19-ին, կիրակի.—Բարեկենդան Վարդավառի պահոց:

Այսօր իրենց անդրանիկ պատարագները մատուցեցին. Մայր տաճարում՝ Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը, Ս. Աստվածածին եկեղեցում՝ Տ. Սիոն աբղ. Ադամյանը, Ս. Հռիփսիմե եկեղեցում՝ Տ. Նավասարդ աբղ. Կճոյանը, Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում՝ Տ. Մերովբե աբղ. Իսախանյանը, և Ս. Գայանե եկեղեցում՝ Տ. Աբրահամ աբղ. Մկրտչյանը:

Նորընծա աբեղաները պատարագի ընթացքում քարոզ խոսեցին, ուր ի մասնավորի ընդգծեցին իրենց պատրաստակամությունը՝ իրենց իմացությունն ու նվիրումը ի սպաս դնելու հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն:





ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԹԵԶԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տ. Պարգև վրդ. Մարտիրոսյանը, 1984 թ. գերազանց ավարտելով Էջմիածնի հոգևոր ճեմարանը, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և կարգադրությամբ ուղարկվեց Լենինգրադի հոգևոր ակադեմիային կից ասպիրանտուրայում ուսանելու համար: Խորանալով Ջատագովական Աստվածաբանության մեջ՝ թեզ պատրաստեց «Աստվածճանաչումը ըստ քրիստոնեական ավանդության և ոչ քրիստոնեական խորհրդապաշտական ուսմունքների՝ Յոգայի, Թեոսոֆիայի և Անտրոպոսոֆիայի» թեմայով:

Թեզը գրելու նպատակն էր վեր հանել խորհրդապաշտական ուսմունքների մոլորվածությունը Աստվածճանաչման և Ճշմարիտ Փրկության հարցերում՝ ցույց տալով քրիստոնեական վարդապետության ճշմարտացիությունն ու գերազանցությունը:

Թեզը բաղկացած է 161 մեքենագիր էջերից և ընդգրկում է քրիստոնեական Աստվածճանաչումը, Աստվածգիտությունը, Աստվածտեսությունը և Յոգայի, Թեոսոֆիայի և Անտրոպոսոֆիայի ծագումն ու աստվածճանաչման տեսությունը:

Ակադեմիայի հատուկ հանձնաժողովի քննարկումից հետո Պարգև վարդապետին թույլատրվեց հանդես գալու թեզի բանավոր պաշտպանությամբ, որը տեղի ունեցավ սույն թվականի հունիսի 20-ին, ներկայությամբ Լենինգրադի և Էստոնիայի միտրոպոլիտ Ալեքսիի:

Հոգևոր ակադեմայի հանձնաժողովի որոշումը հայտարարեց ակադեմիայի ռեկտոր պրոֆ. Գունդարևը՝ նշելով, որ Պարգև վրդ. Մարտիրոսյանի թեզը արդիական է և խիստ անհրաժեշտ այսօրվա գործնական Հովվական Աստվածաբանության տեսակետից: Նշվեց նաև աշխատության լեզվական և գիտական բարձր մակարդակը: Աշխատանքը կարող է ծառայել իբրև ուսումնական ձեռնարկ: Պարգև վարդապետը հրավիրեց այդ հարցերի շուրջ մի շարք դասախոսություններ կարդալու: Որոշվեց նաև պատրաստել աշխատանքի 50 օրինակ՝ տարածելու համար ռուսական եկեղեցիներում: Առաջարկվեց այն հրատարակել Մոսկվայի Պատրիարքության «Բոգոսլովսկիյե տրուդի» հանդեսում:

Լենինգրադի հոգևոր ակադեմիայի անունից այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղարկվեց շնորհակալական և շնորհավորական հեռագիր, որտեղ արտահայտված էր նաև, որ այսպիսի երևույթները առավել ևս ամրապնդում են ոչ միայն Ս. Էջմիածնի և Լենինգրադի հոգևոր դպրոցների, այլև երկու Եկեղեցիների կապերը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է հոգեշնորհ Պարգև վրդ. Մարտիրոսյանին՝ այս նոր ձեռքբերումի համար, հուսալով, որ այսուհետև ևս նա կշարունակի իր գիտական ուսումնասիրությունն ու հովվական գործունեությունը՝ ի փառս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ի շահ հայ հավատացյալ ժողովրդի:

*
* *

Սույն թվականի մայիսի 19-ին Մոսկվայի հոգևոր ակադեմիայի արևելյան Եկեղեցիների ամբիոնում աստվածաբանության թեկնածուի իր աշխատանքը պաշտպանեց Հակոբ սարկավագ Մարտիրոսյանը: Աշխատանքի թեման է՝ «Հայ Առաքելական Եկեղեցու պատարագը և նրա պատմական զարգացումը»: Այն բաղկացած է 141 մեքենագիր էջերից և ընդգրկում է՝

Հայ Առաքելական Եկեղեցու ծագումն ու գործունեությունը առաջին հինգ դարերում.

Հայ Եկեղեցու պատարագը Ե դարում.

Հայ Եկեղեցու պատարագը Զ դարի սկզբից մինչև Ժ դարի վերջը.

Հայոց պատարագը ԺԱ դարից մինչև մեր օրերը:

Հայ Եկեղեցու պատմությանը զուգընթաց, հեղինակը ներկայացրել է պրբազան պատարագի պատմական զարգացումը՝ առանց խորամուխ լինելու դավանաբանական տարբերությունների և վեճերի մեջ:

Աշխատանքի արժեքն այն է, որ Հայ Եկեղեցու ծիսագիտությամբ և պատմությամբ հետաքրքրվող ռուս ընթերցողը իրեն հետաքրքրող հարցերի լուսաբանումը կարող է գտնել ներկայացված աշխատանքում:

Բանավոր պաշտպանությունից հետո, մայիսի 23-ին, Մոսկվայի հոգևոր ակադեմիայի հանդիսությունների դահլիճում նույն հաստատության ռեկտոր Ալեքսանդր արքեպիսկոպոսը Հակոբ սարկավագ Մարտիրոսյանին հանձնեց աստվածաբանության թեկնածուի դիպլոմը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է բարեշնորհ սարկավագին և մաղթում նոր հաջողություններ:

ԹՂԹԱԿԻՑ



Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1986—1987 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Հունիսի 8-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում՝ նախագահությամբ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, տեղի ունեցավ 1986—1987 ուսումնական տարվա փակման հանդեսը:

Տերունական աղոթքից և Հայաստանի քայլերգից հետո, բացման խոսքով հանդես եկավ փոխտեսուչ Պարգև վրդ. Մարտիրոսյանը.

«Այսօր եկել ենք այս նվիրական հարկի տակ, համաձայն մեր հոգևոր ճեմարանի ավանդության, ներկա գտնվելու ամավերջի հանդիսությանը՝ կիսելու մեր սաների ուրախությունը, որով նրանք շրջում են իրենց կյանքում ևս մեկ էջ, նվիրված Հայոց Եկեղեցուն ու ազգին: Ուրախությունը կիսելուց բացի մենք՝ հոգևոր ճեմարանի դասախոսներս, եկել ենք նաև հաշիվ տալու Տիրոջ, Վեհափառ Հայրապետի և մեր ազգի առջև, թե ինչ ենք արել ի նպաստ Քրիստոսի պատգամների քարոզման և հավատացյալների հոգևոր կերտումին:

Հայաստանի վերածննդյան պատմական 301 թվի՝ Լուսավորչի տեսիլքից և հաստատման օրից այս սրբազան հոգևոր դրպրոցի նպատակն է եղել պատրաստել հոգևորականների և հայրենասերների մատաղ սերնդի անքակտելի մի շղթա, որը կարողանա Քրիստոսի ու Սուրբ Գր. Լուսավորչի ջահը անմար պահել՝ դարերի միջով մեր ժողովուրդը առաջնորդելով դեպի ճշմարտության ու փրկության նավահանգիստը:

Այսօր հոգևոր ճեմարանը գտնվելով Հայրենիքում և ամուր հիմք ունենալով Հայրենի հողը, գլխավորությամբ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի, հետևում է Քրիստոսի ու մեր սուրբ թարգմանիչների պատգամներին, քարոզում և ուսուցանում Ավետարանի լույսն ու մեր գիրը հայկական՝ դաստիարակելով քաջակորով հոգիներ, օրինակ ունենալով Ավարայրի հերոսներին, որոնք նահատակվեցին վասն Հիսուսի և վասն հայրենյաց, սնուցում սեր և հավատարմություն Քրիստոսաէջ սրբազան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Մայր Հայրենիքի նկատմամբ:

Դաստիարակման ու քարոզության ընթացքում մենք ունեցել ենք միայն մեկ նպատակ, պատրաստել բարձր բարոյական նկարագրով երիտասարդ հայեր, որոնք միշտ պետք է ապրեն ու գործեն հանուն մի Աստծու, մի Եկեղեցու, մի Հայրենիքի և մեր աստվածատուր մայրենի լեզվի, ջանք ու եռանդ չխնայեն հանուն հաստատուն խաղաղության բովանդակ աշխարհում, որ «արարեալ է յԱստուծոյ»:

Վեհափառ Տեր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, որ արդեն 32 տարիներ ղեկավա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ, ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ (8 հունիսի 1987 թ.)

րում է Ձերդ Սրբությունը, այս տարի ևս հավատ ու գիտություն սերմանեց երիտասարդ հոգիների դաշտում՝ հույս ու վստահություն ունենալով, որ մեր սաները, այդ թվում ավարտական լսարանի 9 շրջանավարտ սարկավագները, պարարտ հող կլինեն՝ բերելու բարի պտուղներ, և կգան լրացնելու մեր Եկեղեցու սպասավորների շարքերը, կմիանան Մայր Աթոռի միաբանությանը և իրենց ուխտով կկանգնեն Իջման Սեղանի առջև՝ Ձերդ Սրբության օրհնությամբ ևս առավել ամրապնդելու Հայաստանյայց Առաքելահաստատ Սուրբ Եկեղեցու սյունները»:

Ապա աշակերտների խումբը երգեց «Էջ Միածին ի Հօրէ», «Որք զարդարեցին» և այլ շարականներ: Արտասանվեցին Եղիշե Չարենցի և Հովհաննես Թումանյանի բանաստեղծություններից: Դաշնամուրի վրա ուսանողները կատարեցին Արամ Խաչատրյանի և Շոպենի ստեղծագործություններից:

Շրջանավարտ ուսանողների անունից ելույթ ունեցավ Գառնիկ սրկ. Կարապետյանը և ասաց.

«Յուրաքանչյուր ուսանող սրտի անսահման թրթիռով է սպասում այն պահին, երբ շրջանավարտ է դառնալու: Ահա հասել է այդ բաղձալի պահը, և մենք՝ ավարտական լսարանի ինը սարկավագներս, բարեհաջող ավարտելով հոգևոր ճեմարանի հընգամյա դասընթացը, հրաժեշտ ենք տալիս մեր ուսանողական նստարանին: Ինքնին ուրախալի է պահը, սակայն միաժամանակ՝ տխուր, որովհետև հրաժեշտ ենք տալիս ոչ միայն նստարանին, այլև մեր հոգևոր ծնողին՝ ճեմարանին, որի հարկի տակ տարիներ շարունակ ստացել ենք մեր հոգևոր դաստիարակությունն ու սնունդը:

Այս առթիվ մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում մեր սիրելի դասախոսներին՝ գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի, որոնք մեզ համար եղել են ոչ թե սոսկ դասատու, այլ ուսուցիչ բառիս բուն իմաստով: Նրանք մեր մեջ ցանել են իմաստության սերմեր և անձանձրույթ տքնել, որպեսզի այդ սերմերը տան իրենց առողջ պտուղները: Նրանց մտքի լույսով ու հոգու ջերմությամբ է, որ այդ սերմերը աճեցին և առատ բերք տվեցին: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նաև Մայր տաճարիս լուսարարապետ գերաշնորհ Տեր Հուսիկ արքեպս. Սանթուրյանին, որը անձնական օրինակ դարձավ մեզ համար եկեղեցական-ծիսական արարողությունների մեջ: Մեր շնորհակալական խոսքը ենք ուղղում նաև հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանին և նախկին փոխտեսուչ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանին, ինչպես նաև մեր դաստիարակ վերակացուներին:

Վեհափառ Տեր, Ձեզ աշակերտելիս և այլ առիթներով մենք շատ բան սովորեցինք Ձերդ Սրբությունից՝ հայրենասիրություն, եկեղեցասիրություն, ազնվություն, անկոտրում կամք և բազում այլ առաքինություններ: Ձերդ Սրբության օրինակը մեզ ոգեշնչել և ոգեշնչելու է մեր հետագա գործունեության ընթացքում: Այս հանդիսավոր պահին իմ սարկավագ եղբայրների անունից վստահեցնում եմ Ձերդ Սրբությանը, որ մեր հետագա գործունեության ողջ ընթացքում, ուր էլ որ լինենք՝ Մայր Հայրենիքում թե Սփյուռքում, միշտ բարձր կպահենք Ս. Էջմիածնի, Հայրենիքի և հայ հոգևորականի պատիվը, մեր ողջ ուժը կներդնենք Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին ծառայելու սրբազան գործին: Այս առիթով մեր երդումն ենք տալիս Ձեզ՝ Ձերդ Սրբություն, և բոլոր ներկաներին. «ԵԹԷ ՄՈՌԱՑԱՑՑ ԶՔԵԶ ԷՋՄԻԱԾԻՆ, ՄՈՌԱՑՑԻ ԶԻՍ ԱՋ ԻՄ: ԿՑԵՍՑԻ ԼԵԶՈՒ ԻՄ Ի ՔԻՄՔՍ ԻՄ՝ ԹԷ ՈՉ ՑԻՇԵՑԻՆ ԶՔԵԶ»:

Վեհափառ Տեր, մեր երդման այս խոսքերով ողջ ուսանողության անունից մաղթում եմ Ձեզ արևշատություն և երկար տարիների բեղմնավոր հայրենասիրական գործունեություն: Թույլ տվեք համբուրել Ձեր Սուրբ Աջը և ստանալ Ձեր հայրական օրհնությունները»:

Տարեկան հաշվետվության ընթացքով հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը: Նա մեծ գոհունակություն հայտնեց, որ այս տարի ճեմարանը ունեցավ ինը սարկավագ շրջանավարտներ, որոնք շուտով կանցնեն եկեղեցական ծառայության՝ միաժամանակ աշխատելով իրենց ավարտաճառերի վրա: Ակներև է հոգևոր ճեմարանի կատարած դերը հայ եկեղեցական կյանքում: Հոգևոր ճեմարանը վերջին տարիներին գրեթե ամեն տարի մեծ թվով շրջանավարտներ է ունենում, որոնք հետո ձեռնադրվում են կուսակրոն կամ ամուսնացյալ քահանաներ և նվիրվում են Հայ Եկեղեցու ծառայության ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Արժանապատիվ տեսուչ տեր հայրն ասաց.

«Վեհափառ Տեր,

Ամենակալ Աստուծո ողորմությամբ իր ավարտին հասավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1986—1987 ուսումնական տարին:

Վեհափառ Հայրապետի հովանավորության ներքո հավաքվել ենք հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում՝ ամփոփելու անցնող ուսումնական տարվա արդյունքները:

Հայտնի է բոլորիս, որ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը հանդիսանում է Հայ Եկեղեցու կարևոր զարկերակներից մեկը: Այստեղ են ծնվում անձինք, որոնց պիտի վստահվեն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կրոնական կյանքի առաջնորդությունը: Այս հաստատումը չափազանց պարտավորեցնում է հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին:

Որքան պարտավորեցնող, նույնքան և դժվարին է մեր աշխատանքը: Ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի աշխատանքը երևում է նրա հասցրած սաների մեջ: Անցնող ուսումնական տարվա ընթացքում հոգևոր ճեմարանի յոթ ուսանողներ հաջողությամբ հանդես եկան իրենց դիպլոմային աշխատանքների պաշտպանությամբ և ստացան վկայական, որ վկայում է, թե նրանք պատրաստ են ոտք դնելու Հայ Եկեղեցու նվիրապետական սանդուղքին: 1986 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, հոգևոր ճեմարանի 7 շրջանավարտներ ստացան սարկավագական աստիճան: Երեկ հոգևոր ճեմարանի շրջանավարտները ծունկի եկան Ավագ խորանի առջև և իրենց կյանքը նվիրեցին Հայ Եկեղեցու սպասավորությանը, որով անցնող ուսումնական տարվա ընթացքում հոգևոր ճեմարանի շրջանավարտներից երեքը դարձան ամուսնացյալ, վեցը՝ կուսակրոն քահանաներ:

Շուտով, հավանաբար սեպտեմբերի երկրորդ կեսին, հոգևոր ճեմարանում դիպլոմ կստանան ևս ինն ուսանողներ, որոնք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ կլինեն հոգևոր ճեմարանի հերթական տուրքը Հայ Եկեղեցուն:

Դասախոսական կազմը

Ինչպես անցնող երեսունմեկ տարիներին, այս տարի ևս հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը գլխավորեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն այսպիսով մեծապես գնահատում է հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին:

Անցնող ուսումնական տարվա ընթացքում հոգևոր ճեմարանում իրենց ուսուցչական աշխատանքը շարունակեցին Եզնիկ քահանա Պետրոսյանը, Եղիշե ավագ քահանա Սարգսյանը, Եղիշե ավագ քահանա Բաղրամյանը, Արտակ ավագ քահանա Սիմոնյանը, Հուսիկ քահանա Լազարյանը, Նարեկ քահանա Մատարյանը, Հայկ սարկավագ Ֆրունջյանը, պարոնայք Պարգև Շահբազյանը, Երվանդ Մելքոնյանը, Արտաշես Մաթևոսյանը, Խորեն Պալյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը, Ստեփանոս Չաքալյանը, Նորիկ Գրիգորյանը, Երվանդ Գրիգորյանը, Արմեն Հովսեփյանը, Կոմիտաս Քեշիշյանը, Կարեն Մաթևոսյանը, Խաչիկ Բաղդիկյանը, Թադևոս Ամմարյանը, Ռուբիկ Կարապետյանը և տիկին Ռոզա Ղալաջյանը: Վերոհիշյալ դասախոսների կողքին այս տարի դասախոսական աշխատանքի հրավիրվեց Պարգև վարդապետ Մարտիրոսյանը:

Տեսչական կազմը

Հոգևոր ճեմարանի տեսչությունն այս տարի ուներ հետևյալ կազմը.

Տեսուչ՝ Եզնիկ քահանա Պետրոսյան

Ընդհանուր դաստիարակ՝ Պարգև վարդապետ Մարտիրոսյան

Քարտուղար՝ Հուսիկ քահանա Լազարյան

Վերակացուներ՝ Աշոտ սարկավագ Թովմասյան

Վաչագան Հովհաննիսյան

Լևոն Պետրոսյան

Գրադարանավար՝ Հենրիկ Բալյան

Բժիշկ՝ Հրաչ Մանուկյան

Ուսանողությունը

1986—87 ուսումնական տարվա սեմին հոգևոր ճեմարանն ուներ 45 ուսանող: Տարվա կեսին եկան ևս 7 ուսանողներ: Տարվա ընթացքում տարբեր պատճառներով հեռացվեցին 16 ուսանողներ, որով տարին ավարտում են 35 ուսանողներ, ըստ հետևյալի.

Ե լսարան՝ 9 ուսանող

Դ լսարան՝ 8 ուսանող

Գ լսարան՝ 8 ուսանող

Նախապատրաստական՝ 10 ուսանող

15 ուսանողներ սփյուռքից են՝ Լիբանան, Սիրիա, Իրաք, Իրան, Հնդկաստան, Եգիպտոս, Ռումինիա, ԱՄՆ, Բրազիլիա, Արգենտինա:

Ուսումնական գործունեության հետ զուգահեռ անցյալ ուսումնական տարվա ընթացքում կատարվել են նաև դաստիարակչական աշխատանքներ. այսպես, կազմակերպվել են դասախոսություններ զանազան թեմաներով, հանդիպումներ Մայր Ա-

թոռի բարձրաստիճան հյուրերի հետ, գեղարվեստական երեկոներ, պտույտներ Հայաստանի զանազան վայրեր՝ հայ ժողովրդի անցյալի և ներկայի նվաճումներին ծանոթանալու նպատակով: Ուսանողները հաճախակի ներկա են եղել համերգների, թատերական ներկայացումների, հանդիպումների և այլն:

Վեհափառ Տեր, թույլ տվեք այս առթիվ հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից ջերմապես շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը այն հոգատար վերաբերմունքի և հայրական խնամքի համար, որ տածում է Ձերդ Սուրբ անձը հոգևոր ճեմարանի նկատմամբ:

Ցանկանում եմ շնորհակալական խոսք ասել նաև Մայր Աթոռի միաբանությանը և պաշտոնեությանը՝ իրենց ցուցաբերած զանազան օժանդակությունների և բարի խորհուրդների համար:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը շնորհակալություն է հայտնում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին՝ ի դեմս տիար Ստեփան Վարդանյանի, որ իր բարի կամեցողությամբ և անհրաժեշտ օգնությամբ օժանդակում է հոգևոր ճեմարանի գործունեությանը»:

Հուսկ ապա Վեհափառ Հայրապետը բաշխեց առաջադեմ աշակերտներին մրցանակները և տվեց իր օրհնությունը՝ շնորհավորելով շրջանավարտներին, տեսչությանը և դասախոսական կազմին՝ 1986—1987 ուսումնական տարին հաջողությամբ ավարտելու համար: Նորին Սրբությունն ասաց.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«Տուր զհամար տնտեսութեան քո» (Ղուկ. ԺԶ 2):

Մեր Տիրոջ՝ Հիսուսի խոսքերն են, որ ասվել են հայտնի «Անիրավ տնտեսի» առակում: Այս արտահայտությունը բնականաբար ի զորու է կյանքի բոլոր բնագավառներում, աշխատանքի ամեն ասպարեզում: Ահա այս պահն է այսօր, երբ կարող ենք ոգեկոչել Հիսուսի նույն խոսքերը՝ «տուր զհամար տնտեսութեան քո», դիմելով մեր հոգևոր ճեմարանի տեսչությանը, ուսուցչական կազմին և, անշուշտ, մասնավորապես ուսանողությանը, որովհետև և՛ տեսչությունը իր աշխատանքով, և՛ դասախոսական կազմը իր գործունեությամբ, և՛ մանավանդ ուսանողները իրենց ուսումով, բարի վարքով, մեկ ամբողջություն են կազմում՝ նույն նպատակին ծառայող: Կարծում եմ, որ անցնող կրթական տարեշրջանում մեր հոգևոր ճեմարանի թե՛ տեսչությունը և թե՛ դասախոսական կազմը, որի մեջ որակյալ մասնագետներ կան Երևանից հրավիրված, իրենց կարելին արեցին և հասան ցանկալի արդյունքների: Կարող են վրիպումներ եղած լինել. ամեն կրթական հաստատության մեջ լինում են նման փոքրիկ զանցառումներ: Բայց ընդհանրապես ես կարող եմ վկայել, որ նրանք իրենց պարտականությունը կատարեցին բարեխղճությամբ ու ձեռնհասությամբ: Եվ ճիշտ կլիներ ավելացնել նաև, որ նրանք իրենց պարտականությունը կատարեցին սրբազան մի գործի ծառայելու գիտակցությամբ: Հիմնականում, սիրելի ուսանողներ, պետք է այս հարցումը ձեզ ուղղենք՝ տվեք ձեր տնտեսության համարը, այսինքն ձեր աշխատանքի համարը, հաշվետվությունը: Արդյոք ամեն մեկը ձեզանից տվե՞ց այն, ինչ որ կարող էր տալ. դուք ինքներդ կարող եք հասկանալ այդ և վկայել: Հրապարակավ վկայելու կարիք չունեք մեր առջև, բայց դուք ձեր խղճի առջև պետք է այդ համարատվությունը կատարեք: Հավանաբար ձեզանից ոմանք իրենց պարտականությունը այնքան էլ լրիվ չկատարեցին, այսինքն չկատարեցին այնքան, ինչքան կարող էին: Դա, անշուշտ, թերացում է: Այս խոսքերը ասում եմ ես ոչ թե քննադատելու, այլ ձեզ խրախուսելու, քաջալերելու համար, որպեսզի հառաջիկա տարիներին աշխատեք ձեր ունակությունների, ձեր շնորհների, ձեր հնարավորությունների առավելագույնը ի գործ դնել, չբավարարվեք միայն ուսուցչի գնահատականով: Հարցը այն չէ, թե ձեր գնահատականը «երեք» է, «չորս» է կամ «հինգ»: Կարող է նույնիսկ մեկը «հինգ» գնահատական ստանալ, բայց իր աշխատանքը բարեխղճորեն կատարած չլինել: Ձեզանից ամեն մեկը Աստծուց տրված շնորհներ ունի, ես վստահ եմ դրանում: Եվ դուք պետք է գիտենաք առավելագույն չափով արժևորել ձեր շնորհները: Ահա այդ պարագային է, որ դուք կդառնաք ավելի կատարյալ ուսանողներ և ապագային նույն բարեխղճությամբ, նույն կատարելությամբ, հույս ունեմ, պիտի ծառայեք մեր Եկեղեցուն:

Այս տարվա շրջանավարտները ինն են, և իմ շրջանի երեսուներկու տարիների ընթացքում, իմ փորձառությունից եմ ասում, լավագույն շրջանավարտների շարքին են պատկանում: Ես ամեն մեկին անձնապես ճանաչում եմ, որովհետև վերջին դասարանին ես եմ դասավանդում քարոզխոսությու-

նը: Նրանք իսկապես ոչ միայն բավարար գնահատական ստացան ինձանից (ես մի քիչ ժլատ եմ, «հինգ» ոչ մեկին չեմ տվել), բայց կարող եմ վկայել, որ նրանց՝ իմ լավագույն աշակերտների շարքին կարող եմ դասել: Եվ քարոզխոսության մեջ, գիտեք, արտահայտվում է տվյալ ուսանողի և՛ կրոնագիտական, եկեղեցագիտական պատրաստությունը, և՛ լեզվական իր հնարավորությունները, և՛ մեր մայրենի լեզուն գեղեցիկ կերպով օգտագործելու կարողությունը, ինչպես նաև իր անձնական, անհատական մտորումները, խոհերը: Այս բոլոր տեսակետներից մեր ինը շրջանավարտները բավարար, և գուցե ավելի քան բավարար չափով գոհացրին ինձ, և ես այսօր շնորհավորում եմ նրանց, ինչպես նաև բոլոր ուսանողներին, որոնք հաջողությամբ ավարտում են այս տարվա ուսումնական շրջանը:

Գրեթե պատահաբար իմ ձեռքի տակ ունեցա Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը: Սա 1910-ի թիվն է, հունիս ամիս, և տեղի են ունեցել նաև այն ատեն շրջանավարտների այսպիսի հանդիսություններ: 77 տարիներ առաջ գրեթե նույն պատկերն էր ներկայացնում հոգևոր ճեմարանը: Սա շատ ուրախալի է մեզ համար, որովհետև նույն ավանդությունն է, որ շարունակվում է ահա 77 տարիներից ի վեր: Զգում ենք, որ ապրում ենք ոչ միայն այսօրվա մեր կյանքը, այլ նաև որ մեր այսօրվա կյանքը հիմնված է հին հիշատակների վրա և գնում է դեպի ապագան:

Մեր օրհնությունը բոլորիդ: Կեցցե Ս. Էջմիածինը»:

Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ սեպտեմբերին բոլորը նոր եռանդով և ոգևորությամբ կսկսեն ուսումնական նոր տարեշրջանը՝ շարունակելու Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի առաքելությունը՝ Հայ Եկեղեցին ապահովելու կրթյալ և բազմակողմանիորեն զարգացած հոգևորականներով:



ՀՈԳԵՇՆՈՐՀ ՊՈՂՈՍ ՎՐԴ. ՏԵՐ-ՆՇԱՆՅԱՆԸ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

Պողոս վրդ. Տեր-Նշանյանը արդեն մեկ դարի ծանրություն ունի ուսերին, բայց շարունակում է ծեսեր կատարել և ներկա լինել Մայր Աթոռում կատարվող հանդիսություններին:

Այդ հարյուր տարիները լեցուն են ճակատագրի վերիվայրումներով՝ հայրենի բնօրրանից զրկվելուց, գաղթի ճանապարհին մահվան սարսափից մինչև Մայր Հայրենիքում, Սուրբ Գեղարդում և այլուր հոգևոր եռանդուն ծառայություն և այսօր՝ երջանիկ ծերություն:

1922-ին Կիլիկիայից Սիրիա անցնելուց հետո մտասևեռում է ունեցել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանք՝ կուսակրոն քահանայության ուխտով կյանքը իր ժողովրդին նվիրաբերելու: Նահատակ Տեր Նշան քահանայի որդին դաստիարակվել էր Հայ Եկեղեցու ծառայության ոգով և 1926-ին գնաց Երուսաղեմ՝ միաբանության շարքերն անցնելու:

1947-ին ներգաղթ Մայր Հայրենիք, հոգևոր ծառայություն տարբեր եկեղեցիներում և 1955՝ միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ լուսարարի օգնական, ապա Ս. Գեղարդ, ուր իր ծնողների հիշատակին աղբյուր-հուշարձան կառուցեց: 1957-ին վարդապետ: 1962 թ. Դարալագյազի Ս. Խաչ վանքի վանահայր և հետագա տարիներին անձնվեր ծառայություն:

Խմբագրությունը ձայնակցում է Մայր Աթոռի միաբանությանը՝ շնորհավորելով հոգեշնորհ հայր սուրբին իր հարյուրամյակի առթիվ և մաղթում է քաջառողջություն և բարօր կյանք՝ ի ծառայություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:



ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՔԱՐՈԶ

«Ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր ամենակարևոր տոներից մեկն է մեզ՝ հայերիս համար, որը կապված է Ս. Էջմիածնի հետ, ինչպես եկեղեցական օրացույցն է հայտնում՝ «Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի»:

Էջմիածին, հայ ոգու զտարանը բազմադարյա, հայոց հույսի փարոսը անմար, որի ստեղծումը ոչ այլ ինչ էր, քան Աստվածահաճո և Աստվածահայտ: Ոչ մեկ հավատքի կենտրոնի ստեղծում չունի այնպիսի ավանդություն, ինչպիսին էր հայոց հավատքի սրբազնասուրբ տապանակը հանդիսացող Ս. Էջմիածինը: Քրիստոս իջավ Հայոց երկիր, ընտրեց հայ ժողովրդին՝ նրան պարգևելով մի նոր Բեթղեհեմ՝ Հայոց Բեթղեհեմը՝ Ս. Էջմիածինը:

Դարերի խորհուրդ կա խտացած այս սուրբ կամարների տակ, մեր նախնյաց շունչը և ոգին կա այստեղ պարուրված, առլեցուն Քրիստոսի Աստվածային խոսքերով ու պատգամներով:

Խոսքեր, որոնք սեր և խաղաղություն, արդարություն և ճշմարտություն են պատգամում, և այդ բոլորը դարձավ հավատամքը մեր ժողովրդի երեկ և այսօր: Եվ մենք, իբրև ճշմարիտ ժառանգորդները Սուրբն Գրիգոր Լուսավորչի և հետևորդները Քրիստոսի, վստահորեն կարող ենք խոստովանել, որ այդ բոլորը պահում ենք մեր հոգիներում և ամեն անգամ այս սուրբ և անմահ տաճարում կատարում ենք ուխտի և երդումի հաստատում՝ մեր և հայոց Աստծու միջև:

Պատմությունը ապացուցեց, դժբախտաբար, որ արդարությունն ու ճշմարտությունը որքան էլ ցանկալի են եղել մարդկային ոգուն, այնուամենայնիվ նրանց պաշտպանները բազում անգամներ են դարձել հալածվածներ: Նման հալածանքի կնիք կար դրոշմված և մեր սուրբ ազգի ճակատագրի մատյանի մեջ: Բայց և ամեն անգամ, ամենածանր պահին, ամենադժվար կացության մեջ ունեցել ենք հույսի և վաղվա խաղաղ արշալույսի գաղափարը, որը մեզ ուսուցանել է մեր մեծ վարդապետը՝ Քրիստոս, որը հայերիս համար հայկականացավ իր էջքով այս սուրբ հողը, Արարատյան աշխարհի այս գողտրիկ անկյունը՝ մեր ժողովրդի վերածննդի հոգևոր ավազանը:

Մարգարեական է Առաքել Դավրիժեցու խոսքը, թե՝ «ի վերայ Աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»: Այո, երկու սրբություններ, որոնք մեր ազգի համար եղել են ուժի և գոյատևման խորհրդանիշներ. ոսկեձույլ Աջը Լուսավորչի, որը խորհրդանիշն է Հայոց Հայրապետի իշխանության, և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որը խորհրդանիշն է հանուր հայության: Եվ անհնարին է պատկերացնել մեր ժողովրդին իր անցյալով և ապագայով՝ կտրված այս երկու սրբություններից, որոնք ընտրվել են և օծվել Աստծու կողմից: Եվ եթե մարդիկ ժամանակի և պայմանների բերումով ջանացել են բաժանել այս երկուսը իրարից, Աստված վերստին միացրել է դրանք:

Էջմիածին, ինչ մեծ խորհուրդ կա այս պարզ բառի մեջ, ինչպիսի կարոտ՝ դաջված շուրթերին հայ պանդուխտի: Նա եղել

է քուրան հայոց կրթության, Հորդանան գետը մեր հավատքի: Զեղավ միայն պարզ աղոթատուն, այլ եղավ օրրանը հայոց գրերի, հայ մտքի կաղապարը սուրբ: Եվ այդ ամենը առանց տատանման պարտական ենք մենք մեծ Հայրապետին՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչին, որը ոչ միայն պարզ քարոզիչ դարձավ Հայոց աշխարհում, այլև դրեց անկյունաքարը Հայոց պատմության, որով ամեն բան Քրիստոսատիպ դառնալուց հետո, դարձավ հայատիպ: Եվ Լուսավորչի սուրբ ոգին և գիտակցությունը դարեդար անցավ առանց խամրելու 130 Հայրապետների ձեռքից-ձեռք, Սուրբ Հոգուց փոխանցվեցին և մարմնավորվեցին Վեհափառ Հայրապետի՝ Ամենայն Հայոց Վազգեն կաթողիկոսի մեջ: Ո՞ր հայն այսօր կարող է Էջմիածնի վերազարթոնքը պատկերացնել առանց Վազգեն Ա Վեհափառի:

Ծինությունը դեռ ոգի չունի, եթե այն կենդանի չէ: Էջմիածինն այսօր կենդանի է, որովհետև կաք դուք՝ ով հայ ժողովուրդ, իմ վերածնված Հայոց աշխարհի ազնիվ վկաներ: Եվ այնքան ժամանակ, քանի կապված են հոգիներն հայոց այս սուրբ տաճարին, մենք պիտի ապրենք, և այնքան ժամանակ, քանի անմար է կանթեղը Լուսավորչի՝ մենք պիտի ապրենք:

Մենք պարտավոր ենք հայի ոգին ամուր պահել այս սուրբ տաճարի աշխարհատես գմբեթից: Աշխարհատես, քանզի այն ամենուր է. Մերձավոր Արևելք, Եվրոպա, Ավստրալիա, Ամերիկա, ամբողջ Սփյուռքում Էջմիածինը հոգու լուսե խորանն է հայ ժողովրդի: Եվ այսօր, հայոց այս մեծ և սուրբ տոնին՝ Էջմիածնի տաճարի հիմնադրման տոնին, սիրելի հավատացյալներ, աղոթք առաքենք առ բարձրյալն Աստված, որ ամուր հիմքերով պահի, պահպանի տաճարն այս սուրբ, Եկեղեցին Հայոց և նրա մեծ Հովվապետին, թող Աստված իր խաղաղության ոգին առաքի ամբողջ աշխարհին, որպեսզի մեր վերածնված Խորհրդային Հայաստանը առավել ևս ծաղկի, բարգավաճի, քանզի նրա ծաղկումով ծաղկեց այսօր և Մայր Եկեղեցին հայոց:

Սեր, միություն և խաղաղություն հանուր մեր ազգին, ամեն:





ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՆԵՐՍԻՍՅԱՆԸ ԱՄՆ-ՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 26-ին, Ամենայն Հայոց Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի հրավերով, Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը՝ մասնակցելու արևմտյան թեմի հոգևորականաց, տիկնանց և թեմական պատգամավորական տարեկան ընդհանուր համաժողովին, որը տեղի պետք է ունենար ապրիլի 30-ին Սան Ֆրանցիսկոյի մոտ գտնվող Օքլանդ քաղաքում: Սրբազան հայրը իր մասնակցությունը բերեց վերոհիշյալ ժողովին՝ ժողովականներին փոխանցելով ողջույններ Մայր Հայրենիքից և օրհնություններ Սուրբ Էջմիածնից: Սրբազան հայրը ժողովականներին պատմեց Մայր Հայրենիքի հոգևոր-կրոնական կյանքի մասին: Նախօրոք կազմված ծրագրի համաձայն, Գարեգին սրբազանը ս. պատարագ մատուցեց Օքլանդի և Սաքրամենտոյի հայ համայնքների եկեղեցիներում, ապա, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի հրավերով՝ Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր եկեղեցում: Իր քարոզներում սրբազան հայրը տեղի հայ համայնքներին փոխանցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունները և բարեմաղթությունները, ինչպես նաև Մայր Հայրենիքում ապրող իրենց քույրերի և եղբայրների սիրո ջերմ ողջույնները, հատուկ գնահատականի արժանացրեց այն եռանդն ու ոգին, այն զոհողություններն ու ներդրումները, որ կատարում են հայորդիները ի խնդիր իրենց ազգային գոյության պահպանման: Գարեգին սրբազանը մասնավորապես շեշտեց, որ ԱՄՆ-ում ապրող հայ ժողովրդի բոլոր զավակները պետք է իրենց սրտերում վառ պահեն սերը դեպի Մայր Հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը, Սուրբ Էջմիածինը:

Ամենուրեք հայ համայնքները մեծ ցանկություն էին հայտնում իրենց մոտ հյուրընկալելու Ամենայն Հայոց Հայրապետին, վստահություն հայտնելով, որ նրա օրհնությունները և հորդորները նոր եռանդ և ոգի կներարկեն տեղի հայ համայնքներին: Համայնքների անկեղծ ցանկությունն է, որ ավելի հաճախ Սուրբ Էջմիածնից հոգևորականներ այցելեն իրենց, որ ավելի հաճախ Մայր Հայրենիքից արվեստի և մշակույթի գործիչներ տեսնեն իրենց համայնքներում, որպեսզի առավել սերտանա կապը Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև:

ԱՄՆ-ի Հայոց արդարության դեմքով Ամերիկյան կաթոլիկությունը վերակենդանացնող միությունը

Մայիսի 6-ին Գարեգին սրբազանը Տ. Արիս եպս. Ծիրվանյանի և Սասուն աբեղա Զմրուխտյանի հետ հանդիպում ունեցավ Կալիֆոռնիայի նահանգապետ պրն. Ջ. Դոքմաճյանի հետ: Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում:

Սրբազան հայրը այցելեց նաև Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Ա. Մանուկյանին: Սրբազան հայրը տիար Ա. Մանուկյանին փոխանցեց Վեհափառ Հայրապետի ողջույնները և շուտափույթ ապաքինման բարեմաղթանքները: Սրբազան հայրը ուղևորության ընթացքում հանդիպումներ ունեցավ արևելյան և արևմտյան թեմերի հոգևորականների հետ, ինչպես նաև Նյու Յորքի Ս. Ներսես վարժարանի սաների հետ:

Մայիսի 30-ին Գարեգին սրբազանը, ավարտելով իր մեկամսյա ուղևորությունը, գոհունակ սրտով վերադարձավ Մայր Հայրենիք և Երևանի Ս. Սարգիս առաջնորդական եկեղեցում քարոզի նյութ դարձրեց իր ուղևորությունը, Երևանի հավատացյալներին փոխանցեց Սփյուռքի հայորդիների սերը և ջերմագին ողջույնները:

Տ. ԱՎԵՏԻՍ ՔՀՆ. ԴԱՆԻԵԼՅԱՆ





ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Սույն թվականի ապրիլի 30—մայիս 2 օրերին, Լիոնի արվարձան Ֆրանշվիլի Սուրբ Իրենե եկեղեցաւ վանքում, տեղի ունեցաւ Արևմտյան Եվրոպայի հայ հոգևորականաց առաջին համագումարը՝ Հայրապետական Պատվիրակության ընդհանուր փոխանորդ գերաշնորհ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանի հրավերով:

Համագումարի նպատակն էր՝ հոգևոր խոկումի, առանձնացման և աղոթքի պահերին զուգահեռ, ունկնդրել մի շարք դասախոսություններ, միաժամանակ՝ միասին մտածել, մտքեր փոխանակել, հայ համայնքներից ներս առօրյա հուզող զանազան հարցերի լուծման ճանապարհներ և միջոցներ որոնել՝ ավելի կազմակերպված և օգտավետ դարձնելու համար հոգևոր-եկեղեցական և ազգային-հայրենասիրական կյանքն ու գործունեությունը՝ ի շահ արևմտյան սփյուռքում ցրված մեր ժողովրդի զավակների:

Հավաքի բացումից հետո, որ կատարեց Գյուտ եպս. Նագգաշյանը, ընթերցվեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի օրհնության պատգամը՝ ուղղված համագումարի մասնակիցներին (Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1987 թ., № № Ե—Զ, էջ 12):

Հայրապետի օրհնության խոսքը կարդաց այս առթիվ Նորին Սրբության պատգամաբեր, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ հոգշ. Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Այնուհետև ընտրվեց համագումարի դիվանը՝ հետևյալ կազմով.

Ատենապետ՝ Տ. Դավիթ եպս. Սահակյան
Ատենադպիր՝ Տ. Տարոն ծ. վրդ. Ճերեճյան

Դիվանին կից բանաձևող հանձնախումբ՝
Տ. Վիգեն վրդ. Այքազյան
Տ. Զատիկ աբղ. Ավետիքյան
Տ. Ասողիկ աբղ. Արիստակեսյան

Ապա հաջորդաբար կարդացվեցին հետևյալ դասախոսությունները.

ա.—Հոգևորականը իր կոչման հետ (Գյուտ եպս. Նագգաշյան)

բ.—Հոգևորականը՝ պաշտպան իր Եկեղեցվո դավանության (Ներսեհ ծ. վրդ. Բալուճյան)

գ.—Հոգևորականը՝ նախանձախնդիր իր Եկեղեցվո ծեսին, ավանդությանց և լեզվին (Նորվան եպս. Զաքարյան):

Առաջին բանախոս Գյուտ եպիսկոպոսը, որպես «ի խորոց սրտի խօսք ընդ եղբայրս», համառոտակի կերպով ներկայացրեց օրինակելի և տիպար հոգևորականին, որպես «բարի, ազնիւ, հաւատարիմ, նուիրեալ ծառայ Տեառն», հորդորեց հաճախ հիշել և հավատարիմ մնալ ձեռնադրության ժամանակ կատարած մեր բոլոր խոստումներին՝ հրամայական և կարևորագույն պայմանը հոգևորականի ծառայության և գործունեության հաջողությանց:

Երկրորդ բանախոս Ներսեհ հայր սուրբը ներկայացրեց Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանության հիմք կազմող տիեզերական առաջին երեք ժողովների (Նիկիա, Կ. Պոլիս, Եփեսոս) պատմությունը և Եկեղեցու ուղղափառ հայրերի որոշումներն ու դավանաբանական սահմանումները, հրա-

վիրեց զգուշանալ և հեռու մնալ օտարամուտ ավանդություններից և հատկապես աստվածաբանական և ծիսական զանազան հարցերի նկատմամբ ունեցած զուտ անհատական մոտեցումներից:

Ահավասիկ այդ առաջարկություններից մի քանիսը.

ա.— Կազմել մի հանձնախումբ, որը պիտի ուսումնասիրի և բանաձևի առօրյա զանազան հարցերը և այն հանձնի գալիք հա-

Արևմտյան Եվրոպայի հայ հոգևորականաց համագումարի մասնակիցները

Իսկ Նորվան եպիսկոպոսը իր խոսքի մեջ հատկապես շեշտը դրեց հոգևորականի նախաձեռնության վրա՝ հանդեպ իր կատարած ծեսի, ունեցած ազգային և եկեղեցական ավանդության և մայրենի լեզվի, ասելով՝ «Ծեսը պետք է կատարվի հավատքով, ապրումով, երկյուղածությամբ, որպեսզի այն լավագույնս փոխանցվի հավատացյալ ժողովրդին: Ծեսը պետք է նաև արդիականացնել, որովհետև այն արարք է ժամանակի մեջ»:

Յուրաքանչյուր զեկուցումից հետո տեղի ունեցան զանազան հարց ու պատասխաններ, մտքերի հետաքրքիր և օգտակար փոխանակումներ, բազում առաջարկներ ու թելադրություններ:

մագումարների ուշադրության և քննության.

բ.— Ունենալ Եկեղեցու ձայնը հանդիսացող պաշտոնական մի երկլեզու պարբերական՝ եկեղեցական, ծիսական, աստվածաբանական և զանազան այլ հարցերը մատչելի կերպով ժողովրդին ներկայացնելու և լուսաբանելու համար.

գ.— Ունենալ թեմական, համայնքային կամ ծիսական թերթիկներ.

դ. — Պատրաստել քրիստոնեական ուսուցման առձեռն դասագրքեր տարբեր տարիքների համար.

ե.— Ամեն համայնքից ներս կազմակերպել երիտասարդաց կրոնական շարժումներ և զանազան միջոցառումներ, հատ-

կապես ուսումնասիրելու համար Սուրբ Գիրքը, Հայ Եկեղեցու մշակույթը, ծեսը և պատմությունը.

զ.— Ամեն տարի եկեղեցասեր երիտասարդաց խմբեր ուղարկել Հայաստան՝ ծանոթանալու, ուսումնասիրելու և կապվելու համար մեր հոգևոր-եկեղեցական և մշակութա-ազգային արժեքներին:

է.— Մտածել ֆրանսածին հոգևորականներ պատրաստելու մասին՝ նրանց ուղարկելով Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարան ուսանելու համար և այլն:

Համագումարի մասնակիցները որոշում ընդունեցին գալիք հանդիպումների մասին:

Երկօրյա հավաքը իր լրումին հասավ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանի եզրափակիչ խոսքով: Սրբազան հայրը ցանկություն հայտնեց հետ այսու տարին 2 անգամ կանոնավոր կերպով նմանօրինակ ժողովներ գումարել՝ քննարկելու և զրուցելու համար Եկեղեցու կյանքի հետ առնչվող զանազան հարցերի շուրջ՝ ի խնդիր Արևմտյան Եվրոպայի հայ համայնքների կրոնա-բարոյական և ազգային-հայրենասիրական կյանքի առավել կազմակերպման:

Տ. ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՅՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Աղեքսանդրիոյ Յոյն Օրթոտոքս Նորընտիր Պապ և Պատրիարք Նորին Ամենապատուութիւն Բարթեղիոս Գ-ի գահակալութեան հանդիսութենէն ետք, Թեմիս Առաջնորդ գերշ. Տ. Զաւէն Սրբ. Արքեպս. Չինչինեան, ընկերակցութեամբ Արժ. Տ. Նարեկ Խաչակիր Քհնյ. Ֆրնճեանի և Ազգային Իշխանութեան Գործադիր Ժողովի Ատենապետ, Տիար Նուպար Սիմոնեանի, Երկուշաբթի, 6 Ապրիլի առաւօտուն շնորհաւորական այցելութեան գնաց Ն. Ամեն. Բարթեղիոս Գ Պատրիարքին, Այոռանիստ Համզաուիի եկեղեցին:

Հիւրերը դիմաւորեց Գերշ. Տ. Բեթրոս Բաբաթերու, Պապելոնի Եպս.ը և առաջնորդեց Պատրիարքարան: Ընդունելութեան ներկայ էր նաև Գերշ. Տ. Վարնավաս Մետրոպոլիտ Բոր Սայիտի և Պատրիարքական Փոխանորդ Աղեքսանդրիոյ, նաև Գերշ. Տամիանոս Եպս. Սինայի Ս. Կատարինէ վանքի վանահայր:

Ողջագուրումէ ետք, Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. յայտնեց թէ Գահակալութեան հանդէսին կը գտնուէր Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը թէև շնորհաւորական ու սիրոյ հեռագիր ղրկած էր, սակայն յանձնարարած էր Զաւէն Արքեպս.ին, անձամբ բերել նաև իր եղբայրական ողջոյնները: Սրբազան Հայրը յայտնեց թէ Հայց. Եկեղեցին դարերու ընթացքին, մանաւանդ Ե դարէն ետք, սերտ յարաբերութիւններ մշակած է Յոյն Ուղղափառ Եկեղեցիին հետ: Թէ Հայ Եկեղեցւոյ մեծանուն հայրերէն շատեր իրենց ուսումնառութեան համար մեկնած են Աթէնքի, Կ. Պոլսոյ և Աղեքսանդրիոյ համբաւաւոր դպրոցները և թարգմանած են Յոյն մատենագրութեան հատընտիր գործերը: Ցանկալի է, ըսաւ Սրբազանը, որ երկու Եկեղեցիներուն յարաբերութիւնները նաև այսօր սերտ և եղբայրական ըլլան, վասն զի բոլորիս հասարակաց շահերը առաւել ևս կարդիւնաւորուին փոխադարձ սիրով: Գիտենք, որ կազմակերպուած համայնքներ ունիք Ափրիկեան ցամաքամասին վրայ բազմաթիւ երկիրներու մէջ և հիմէն ի վեր ուժեղ առաքելական գործ կը կատարէ Օրթոտոքս եկեղեցին: Կը մաղթենք որ Ձեր գահակալութեան տարիները խաղաղութեամբ, շինարար աշխատանքի, յառաջդիմութեան և Եկեղեցիներու ծաղկման ժամանակաշրջան մը ըլլան:

Նորին Ամեն. Պատրիարք Բարթեղիոս Գ շնորհակալութիւն յայտնեց և խնդրեց որ իր եղբայրական զգացումները փոխանցենք Ն. Սրբութիւն Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ինչ կը վերաբերի մեր զոյգ Եկեղեցիներու յարաբերութեան, ըսաւ Նորին Ամենապատուութիւնը, անհամաձայնութիւններու պատճառը արտաքին ազդակները եղած են, քան թէ հաւատքի հիմնական հասկացողութիւն: Քաղցրութեամբ յիշեց Աղեքսանդրիոյ Եկեղեցեաց էկումենիկ աշխատանքներու մէջ, Վարնավաս Եպս.ի և իր հետ Հայ Եկեղեցւոյ համագործակցութիւնը: Հետաքրքրուեցաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մասին Անթիլիասի յարաբերութիւններուն, ինչպէս նաև Եգիպտոսի մէջ մեր գաղութի այժմու վիճակի մասին: Ապա բոլոր ներկաները մեկնեցան Մայր Տաճար ուր միասին աղօթելէ ետք, հիւրերը ողջագուրմամբ հրաժեշտ առին:

Յաջորդ օր, Երեքշաբթի 7 Ապրիլի երեկոյեան ժամը 5-ին, Ն. Ամեն. Բարթեղիոս

Գ. Պատրիարք, ընկերակցութեամբ Գերշ. Վարնավաս և Բեթրոս Եպս.ներու և Պատրիարքարանի դիւանապետին, փոխ-այցելութեամբ եկան Ազգային Առաջնորդարան ուր զիրենք ընդունելու համար ներկայ էին սանդրիոյ Պատրիարքութեան և իբրև մեր Տիրոջ տասներեքերորդ առաքեալ, քանի որ Ձեր տիտղոսն է այս: Պատմութեան մէջ, յատկապէս Քրիստոնէութեան սկզբնական դարերուն, Աղեքսանդրիան, իբրև իմաս-

Նորին Ամենապատվություն Բարթեղիոս Գ. Պատրիարքը և գերաշնորհ Տ. Զաւէն արքեպս. Չինչինյանը Եգիպտոսի հայոց առաջնորդարանում

Արժ. Տ. Նարեկ Խաչակիր Քհնյ. Թեմական Ժողովի Ատենապետ Տիար Բօլ Քիլիտճեան, Ատենադպիր Տօքթ. Սուրէն Պայրամեան, Գործադիր Ժողովոյ Ատենապետ Տիար Նուպար Սիմոնեան, Ատենադպիր Տիար Նորայր Տէօվլէթեան:

Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ խօսք առնելով, Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Ըսաւ.—

«Ձերդ Սրբութիւն, Հոգևոր ուրախութեամբ Ձեզ, ինչպէս նաև Ձեր շքախումբի Գերշ. անդամները սիրով կողջունենք յանուն Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Կաթողիկոսին, Եգիպտոսի Հայ Եկեղեցւոյ և համայնքի այս կեդրոնին մէջ: Կը յիշենք Ս. Գրական խօսքը «Ինչքան գեղեցիկ է քարոզիչին գալուստը»: Շնորհակալ ենք Ձեր շնորհաբեր այցելութեան համար որով Ձեզ հետ կը բերէք օրհնութիւն: Ի սրտէ կը շնորհաւորենք Ձեզ յԱթոռ Աղեքսանդրիոյ Պատրիարքութեան և իբրև մեր տասներեքերորդ առաքեալ, քանի որ Ձեր տիտղոսն է այս: Պատմութեան մէջ, յատկապէս Քրիստոնէութեան սկզբնական դարերուն, Աղեքսանդրիան, իբրև իմաստասիրական և աստուածաբանական կեդրոն, համբաւաւոր էր: Եկեղեցւոյ մեծանուն հայրեր ինչպէս Կիւրեղ Աղեքսանդրացին, Աթանաս և Որոգինէս, ճշմարիտ դաւանութիւնը ուսուցին: Ահա այս երանելի հայրերու Աթոռին բազմելու կոչուեցաւ Ձերդ Սրբութիւնը: Կը մաղթենք և կաղօթենք որ Ձեր գահակալութեան շրջանին Ուղղափառ մեր Եկեղեցիները առաւել ևս ծաղկին և յառաջդիմեն, կաղօթենք խաղաղութեան ամրապնդման համար: Կը մաղթենք Ձեզի առողջութեամբ երկար կեանք»:

Նորին Ամեն. Պատրիարքը վերստին անդրադարձաւ Յոյն և Հայ Եկեղեցիներու եղբայրակցութեան և գործակցութեան: Շնորհակալութիւն յայտնեց ցոյց տրուած ընդունելութեան և շնորհաւորանքի ու մաղթանքի խօսքերուն համար: Խնդրեց որ իր եղբայրական զգացումները փոխանցենք Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց

Վեհափառ Կաթողիկոսին: Երկար կեանք և արևշատութիւն մաղթեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ապա Սրբազան հայրը մի առ մի Ն. Ամենապատուութեան ներկայացուց Ազգային Իշխանութեան անդամները, որոնք ունեցան սրտաբաց զրոյց Ն. Սրբութեան հետ:

Յանուն Ազգային Իշխանութեան, Պատրիարք Սրբազանին նուիրուեցաւ Ս. Էջմիածնի «Գանձեր» փառաւոր գիրքէն օրինակ մը: Յիշատակի համար խմբանկարուելէ ետք, բոլոր ներկաները ուղղուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր դպիրներ և հոգևորականներ «Հրաշափառ» շարական երգելով Ն. Ամենապատուութիւնն ու իր շքախումբի անդամները առաջնորդեցին դէպի խորան:

Հիւրերը մեկնեցան ողջագուրմամբ:

*
* *

Մերձաւոր Արևելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու նախագահ, վերապատուելի Յովհաննէս Գարճեան, որը շաբաթէ մը ի վեր Եգիպտոս եկած էր, Շաբաթ 9 Մայիսի առաւօտուն, ընկերակցութեամբ իր տիկնոջ և Տիար Հայկ Փիլիպոսեանի, այցելեց Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին և Ազգային Առաջնորդարան:

Հիւրերը ընդունեցին Գերշ. Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեան և Արժ. Տ. Նարեկ Խաչակիր Քհնյ. Ֆրունճեան:

Ջերմ մթնոլորտի մէջ զրոյցն ընդգրկեց Մերձաւոր Արևելքի մէջ Հայ եկեղեցիներն ու համայնքները հետաքրքրող խնդիրները, ինչպէս նաև եկեղեցեաց էկումենիկ շարժումը, խաղաղութեան ամրապնդումը, Ազգային վարժարաններու և այլ շահեկան հարցերը:

Եկեղեցւոյն մէջ միատեղ աղօթելէն ետք հիւրերը մեկնեցան գոհունակութեամբ:

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Գահիրէ, 12 մայիս 1987





ԱՊՐԻԼՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՂԴԱԴՈՒՄ

Բաղդադի առաջնորդարանից հաղորդում են.

1987 թվականի Ծաղկազարդը, Ավագ Շաբաթը, Ս. Հարության տոնը և Ապրիլ 24-ի հուշատոնը բացառիկ հանդիսավորությամբ են նշվել Բաղդադում՝ ի հոգևոր սնունդ և մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և լայն շրջափակը եռում էին համայնքի զավակներով, որոնք և՛ իրենց ոգեշնչող ցնծությամբ, և՛ միահամուռ ներկայությամբ խանդավառ մթնոլորտ էին ստեղծում:

Իրաքի հայ բնակչությունը կազմում է մոտավորապես 20000 հոգի, որոնց մոտ 14000-ը կայք է հաստատել Բաղդադում: Արարողություններին մասնակցում էին ոչ միայն բաղդադցիներ, այլև այլ շրջանների հայեր, մոտ 11000 հոգի. սա վկայում է հայ ժողովրդի միասնական ջանքի և առաջնորդարանի լավ աշխատանքի մասին՝ գլխավորությամբ թեմի բարեխնամ առաջնորդ գերշ. Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի:

Խորհրդանշական է, որ Ոտնլվայի արարողությանը, իբրև Քրիստոսի աշակերտներ, մասնակցել են 12 հայ զինվորներ, որոնք իրենց պարտականությունն են կատարում իրենց ծննդավայրի նկատմամբ՝ Իրաք-Իրանյան երկարամյա ուժասպառ պատերազմում: Սրբազան հայրը իր քարոզում հույս է հայտնել, որ այդ օրվա օրհնությունը այդ զինվորներին կբերի խաղաղության ցանկալի ավետիսը. «Խաղաղություն հեռավորաց, խաղաղություն մերձավորաց, խաղաղություն ամենեցուն»:

Հատկանշական է նաև, որ Ապրիլյան մեծ եղեռնի հուշատոնը նույնպես կատարվել է եկեղեցում, միասնական ջանքերով և համախումբ: Ներկաներին իր առաջնորդական պատգամն է տվել Ավագ սրբազանը, որից հետո Ազգային կենտրոնական վարչության գլխավորած թափորը առաջնորդվել է տեղի Ապրիլյան հուշարձան, ուր հոգեհանգստյան պաշտոն է կատարվել «Բյուրավոր նահատակաց հոգիների համար»:

Բաղդադում ապրիլ ամիսը հաստատեց հայ ժողովրդի ապրելու կամքը:

ԹՂԹԱԿԻՑ



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ИЮЛЬ 1987 г.)

1. Незабвенные дни (редакционная)—(стр. 3—5).

2. Обмен телеграммами между Евангелической—Лютеранской Церковью Эстонии и Первопрестольным Эчмиадзином, 29 июня 1987 года (стр. 6—7).

3. *Священник Петрос Малян*—Визит Его Святейшества Вазгена I в монастырь св. Гегарда, 28 июня 1987 г. (стр. 8—14).

4. Пребывание Его Высокопреосвященства Максима V патриарха Антиохии и всего Востока Греческой Католической церкви в Первопрестольном Светом Эчмиадзине, 6—7 июня 1987 г. (стр. 15—17).

5. Сообщение канцелярии Первопрестольного Эчмиадзина о посвящении в сан иеромонаха пяти выпускников-диаконов Духовной академии св. Эчмиадзина, 16 июня 1987 года (стр. 18).

6. Сообщение канцелярии Первопрестола о годовой сессии подгруппы «Ближний Восток» Христианской Мирной Конференции, 18 июня 1987 г. (стр. 19—20).

7. Сообщение канцелярии Первопрестольного Эчмиадзина о пребывании Его Высокопреосвященства Максима V Патриарха Антиохии и Всего Востока Греческой Католической церкви в святом Эчмиадзине, 19 июня 1987 г. (стр. 21—22).

8. *Ерванд Мелконян*—Заседания Христианской Мирной Конференции в Первопрестольном Святом Эчмиадзине, 12—15 июня 1987 г. (стр. 23—30).

8. *Ерванд Мелконян*—Заседание Христианской ном Святом Эчмиадзине, 7 июня 1987 г. (стр. 31—34).

10. Биографии новорукоположенных иеромонахов—Сепуха Чулджяна, Сиона Адамяна, Наварда Кчояна, Серовбе Исаханяна и Абраама Мкртчяна (стр. 35—39).

11. Церковная хроника. Новости. Описание литургий, проповедей и других торжеств в Первопрестоле за июнь—июль месяцы 1987 г. (стр. 40—41).

12. Защита диссертаций на степень кандидата богословия архимандрита Паркева Мартиросяна (20 июня 1987 г.) и дьякона Акопа Мартиросяна (19 мая 1987 г.).—(стр. 42—43).

13. Торжественное закрытие 1986—1987 учебного года Духовной академии святого Эчмиадзина, 8 июня 1987 г. (стр. 44—48)

14. 100-летие Его Высокопреподобия архимандрита Погоса Ншаняна (краткая биография)—(стр. 49).

15. *Архимандрит Комитас Овнанян*—Проповедь (стр. 50—51).

16. *Священник Аветис Даниелян*—Пребывание предводителя патриаршей Араратской епархии Его Преосвященства епископа Гарегина Нерсесяна в США с 26 апреля по 30 мая 1987 г. (стр. 52—54).

17. *Иеромонах Затик Аветикян*—Съезд армянского духовенства Западной Европы в Лионе, 30 апреля—2 мая 1987 г. (стр. 55—57).

18. Визит Его Высокопреосвященства архиепископа Завена Чинчиняна, предводителя армянской церковной епархии Египта Его Святейшеству Парфению III, греческому патриарху Александрии и ответный визит Святейшего Парфения III в резиденцию армянского епархиального предводительства (стр. 58—60).

19. Празднование Вербного Воскресения, Страстной Недели, Святого Воскресения и поминовение памяти жертв геноцида в Багдаде (стр. 61).



"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JULY 1987)

1. „Happy days" (editorial)—(pp. 3—5).

2. Cables exchanged between the Holy See and the Evangelical Lutheran Church of Estonia, 29th June 1987 (pp. 6—7).

3. **Father Petros Malyan**—The visit of His Holiness to the monastery of Holy Geghard, 28th June 1987 (pp. 8—14).

4. His Beatitude Maximos V Hakim, the Patriarch of the Greek Catholic Church of All East, in the Mother See of Holy Etchmiadzin, 5—7th June 1987 (pp. 15—17).

5. The communiqué of the Holy See's Chancellory about the ordination of the five deacons to celibate priest, 16th June 1987 (p. 18).

6. The communiqué of the Holy See's Chancellory about the annual session of „Near East" sub-commission of the Christian Peace Conference in Holy Etchmiadsin, during the days of 12—15th June, 18th June 1987 (pp. 19—20).

7. The communiqué of the Holy See's Chancellory about His Beatitude Maximos V Hakim, the Patriarch of the Greek Catholic Church of Antioch and of All East, who was in Holy Etchmiadzin, 19th June 1987 (pp. 21—22).

8. **Yervand Melkonian**—The meeting of the Christian Peace Conference in the Holy See of St. Etchmiadzin, 12—15th June 1987 (pp. 23—30).

9. Ordination of celibate priests in the Holy See of St. Etchmiadzin, 7th June 1987 (pp. 31—34).

10. The biographies of Rev. Sebooh Chooldjian, of Rev. Sion Adamian, of Rev. Navassard Kedjoyan, Rev. Serovbe Issakhanian and Rev. Abraham Mekertchian (pp. 35—39).

11. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of June-July 1987 (pp. 40—41).

12. The oral presentation of the theses for the degree of candidate of Theology of Rev. Parkev Martirossian (20th June 1987) and of Deacon Hakob Martirossian (19th May 1987)—(pp. 42—43).

13. The feast at the end of the 1986—1987 scholar year of the Spiritual Seminary of Holy Etchmiadzin, 8th June 1987 (pp. 44—48).

14. The Reverend Poghos Ter Neshanian is 100 years old (short biography)—(p. 49).

15. **Rev. Komitas Hovnanian**— Sermon (pp. 50—51).

16. **Father Avetis Danielian**—The vicar of the Araratian Patriarchal diocess Rev. Bishop Garegin Nersessian in U.S.A., 26th April—30th May 1987 (pp. 52—54).

17. **Rev. Zatik Avetikian**—The conference of the Western Europe's Arménian clergy in Lyon, 30th April—2nd May 1987 (pp. 55—57).

18. The visit of Rev. Archbishop Zaven Tchintchinian, prelate of the Armenian diocese of Egypt, to His Holiness Parthenios III, Pope and Patriarch of Greek Orthodox Church of Alexandria and of All Africa (6th April 1987) and His Holiness' return visit to the Armenian prelacy (7th April 1987)—(pp. 58—60).

19. The ceremonies of Palm-Sunday, of Holy Week, of the feast of Holy Resurrection and of the 1915 April Genocide's memorial day in Bagdad (p. 61).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Երանելի օրեր 3
Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու և Մայր Աթոռի միջև փոխանակված հեռագրեր 6
ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱԼՅԱՆ—«Ես Է՛լ եկել եմ իբրև ուխտավոր» 8
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն Մաքսիմոս Ե Հաքիմը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում . . 15
Հաղորդագրություն 18
Հաղորդագրություն 19
Հաղորդագրություն 21
Ե. ՄԵԼՔՈՆՅԱՆ—Քրիստոնեական Խաղաղության Համաժողովի հավաքը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 23
Աբեղայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 31
Տ. Սեպուհ աբեղա Զուլջյան 35
Տ. Սիոն աբեղա Ադամյան 36
Տ. Նավասարդ աբեղա Կճոյան 37
Տ. Սերովբե աբեղա Իսահակյան 38
Տ. Աբրահամ աբեղա Մկրտչյան 39
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 40
Աստվածաբանության թեկնածուի թեզերի բանավոր պաշտպանություն . . . 42
Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1986—1987 ուսումնական տարվա փակման հանդեսը 44
Հոգեշնորհ Պողոս վրդ. Տեր-Նշանյանը 100 տարեկան է 49
ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՀՈՎՆԱՆՅԱՆ—Քարոզ 50
ԹԵՄԱԿԱՆ ԿՑԱՆՔ
Տ. ԱՎԵՏԻՍ ՔՀՆ. ԴԱՆԻԵԼՅԱՆ—Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը ԱՄՆ-ում 52
Տ. ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Արևմտյան Եվրոպայի հայ հոգևորականաց համագումարը 55
Այցելություն Աղեքսանդրիոյ Ցունաց Պատրիարքին 58
Ապրիլյան տոնակատարություններ Բաղդադում 61
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата 62
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Հանձնված է արտադրության 3.08.1987 թ.: Ստորագրված է տպագրության 31.07.1987 թ.:
Տպագրական 4 մամուլ+2 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 978:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1987 թ.